ա) *Ֆրանսիան, Իսպանիան և Իտալիան* կարգավորումներ ունեն իրենց սահմանադրություններում, իրենց մեծ կողիֆիկացիաներում ու իրենց դատավարական օրենսգրքերում: *Իսպանիայում* իրավունքի աղբյուր են համարվում օրենքը, բարքերը և ընդհանուր իրավական սկզբունքները („Las fuentes del ordenamiento jurídico español son la Ley, la costumbre y los principios generales del derecho“, Código civil հոդվ. 1 մաս I): Հաստատված դատական պրակտիկան դասվում է այս սկզբունքների թվին, այնպես որ, եթե որևէ դատարան այն հաշվի չառնի, դա կարող է վճռաբեկության (ռեվիզիայի) հիմք հանդիսանալ: Չնայած դրան՝ հիմնավորումը տալիս է շեղվելու հնարավորություն (տես օր. Albaladejo, Derecho Civil I [2009] է. 134): *Իտալիայում* իրավունքի աղբյուր են համարվում օր. ըստ ԶՕ 1-ին հոդվածի օրենքները, որոշումները, կանոնադրությունները, սովորույթները: Ինչ վերաբերում է գերագույն դատարանների որոշումների պարտադիր ներգործությանը, ապա այստեղ սկզբունքորեն խոսքը **մեկնաբանման** մասին է: Այսպիսով, գոյություն ունեցող իրավական պրակտիկան պետք է հաշվի առնվի վճռված գործի շրջանակից դուրս: Հատուկ նշանակություն ունեն վճռաբեկ դատարանի միացյալ սենատների պլենար որոշումները, որոնք առանձնահատուկ դեր են խաղում 2006-ին իրականացված ռեֆորմի արդյունքում: Համապատասխան կարգավորումը գտնվում է Իտալիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդվ. 374-ում: Վճռաբեկ դատարանը (Corte Suprema di Cassazione) ի թիվս այլ խնդիրների պարտավոր է ուշադրություն դարձնել դատական պրակտիկայի միասնականությանը: Այդ գործառույթն ունեն նախ և առաջ միացյալ սենատների որոշումները. միացյալ սենատներին են ուղարկվում դատարանի նախագահի կարգադրությամբ որոշումները, եթե առկա են ոչ միասնական դատական պրակտիկայի արդյունքներ և եթե այդ որոշումները վերաբերում են հատուկ նշանակություն ունեցող սկզբունքային հարցերի (Eccher, Handbuch des italienischen Zivilrechts, 2009, S. 46):

www.lawinstitute.am

Սենատներն առանձին-առանձին՝ հասարակ սենատները (Sezioni Semplici), իրավունք չունեն հակառակվելու միացյալ սենատների (Sezioni Unite) դիրքորոշմանը, այնպես որ այդ գերագույն ատյանի որոշումները պարտադիր են հասարակ սենատների համար (Viola, Il vincolo delle Sezioni unite nel D. LVO 40/2006: Ombre e Luci, S. 1): Պարտադիր ներգործության հետ գործ ունենք մաս այն դեպքերում, երբ վճռաբեկ դատարանը գործը հետ է ուղարկում iudex a quo-ին քաղաքացիական կամ քրեական դատավարությունում: Այնուամենայնիվ գործնականում ստորադաս ատյանների դատարանները մեծ մասամբ հետևում են վճռաբեկ դատարանի որոշումներին, այնպես որ առաջանում է մշտական դատական պրակտիկա մաս, եթե օրենքը հստակորեն չի սահմանում պարտադիր ներգործություն:

Իրադրությունը նման է **Ֆրանսիայում**: Գիտնականները, վկայակոչելով իշխանությունների տարանջատման սկզբունքը, գերրազանցապես այն կարծիքին են, որ դատական պրակտիկան իրավունքի աղբյուր չի հանդիսանում (Hübner/Constantinesco, Einführung in das französische Recht, 4. Aufl. 2001, S. 10): Նրանց ասելով, մի կողմից դատավորը կիրառում է արդեն գոյություն ունեցող դրույթ (օրենք կամ բարք), այնպես որ նորը չի ստեղծվում: Դատավորի խնդիրն է մեկնաբանել նորմը և հարմարեցնել կոնկրետ գործը ընդհանուր դրույթի ներսում: Իրավական ուժը (res judicata) լուծված գործին չի շնորհում ավելի հեռուն տանող նշանակություն: Res judicata-ն պարտադիր ներգործություն չունի երրորդ անձանց համար (Larroumet, Droit civil: Introduction à l'étude du droit privé, 4. Aufl. 2004, S. 164): Res judicata-ն պարտադիր ներգործություն չի ծավալում արդարադատության մույն ճյուղի դատարաններում ապագայում քննվող գործերի նկատմամբ: Այնուամենայնիվ դատարանների որոշումների նշանակությունն անկասկած ճանաչված է, այնպես որ ֆրանսիական գերագույն դատարանների գործունեությունը կարևոր դեր է խաղում իրավունքի միասնական կիրառման հարցում: Ճիշտ է, դատավորը տարբեր ատյաններում գործի քննությունից դուրս կաշկանդված չէ վերադաս ատյանների որոշումներով, բայց այն դրույթը, որով նա ղեկավարվում է, չի կարող առանձին դիտվել, այն պետք է դիտվի գերագույն դատարանի կողմից տրված մեկնաբանու-

թյան համատեքստում: Տարբեր ատյաններում գործի քննության ընթացքում պարտադիր ներգործությունը գոյություն ունի օրենքի ուժով գործը երկրորդ անգամ հետ ուղարկելու դեպքում. դրանից դուրս գործում է գերագույն դատարանների դիրքորոշման «համոզման» ուժը. դիրքորոշում, որին ստորադաս դատարաններն սկզբունքորեն հետևում են, բացի այն դեպքերից, երբ գիտակցաբար ցանկանում են շեղվել դրանից, դատական պրակտիկայում փոփոխություն առաջացնելու համար:

բ) Շատ մնան է իրադրությունը Հունաստանում՝ Հայաստանին թերևս ամենից մոտ գտնվող ԵՄ անդամ պետությունում: Հունական սահմանադրության հոդվ. 87 կարգավորում է Արեոպագի (գերագույն դատարան) կառուցվածքն ու դատական պրակտիկայի միասնակության վերահսկողության գործառույթը: Սակայն այստեղ էլ նրա որոշումների պարտադիր ներգործությունն օրենքի ուժով սահմանափակված է գործի քննությամբ տարբեր ատյաններում: Բայց պարտադիր ներգործություն համոզմունքի ուժով կա այստեղ էլ: Դրա դրոշմն է կրում դատական պրակտիկան: Դատական պրակտիկան Հունաստանում իրավունքի ամսիջական աղբյուր չի հանդիսանում, բայց կարող է դիտվել որպես իրավունքի անուղղակի աղբյուր: Յուրաքանչյուր դատավոր կարող է իրավական վեճին ազատորեն տալ իր իրավական լուծումը, անգամ եթե մեկ այլ (վերադաս) դատարան մնան գործով այլ իրավական լուծում է տվել: Այսօր գործնականում վերին ատյանների դատարանների որոշումները հաշվի են առնվում, թեև այդ որոշումները չեն կաշկանդում ստորին ատյանների դատարաններին տարբեր ատյաններում կոնկրետ գործի քննությունից դուրս. որպես կանոն՝ նրանք չեն շեղվում վերադաս դատարանների դիրքորոշումից, բացի այն դեպքերից, երբ նոր մոտեցումներ են առաջանում: Մշտական դատական պրակտիկան ապահովում է արդարադատության միասնականությունը, պայմանագրերի կայունությունը և հայցվորի իրավունքների պաշտպանությունը:

6. Իհարկե այլ է իրադրությունը Մեծ Բրիտանիայում, որն այդպես էլ չունեցավ կողիֆիկացիոն համակարգ. այդ մույն պատճառով այստեղ կարող էինք խոսել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին: Սակայն առնվազն ժամանակը խնայելու համար ես կմնամ Եվրոպական Միություն-

www.lawinstitute.am

նում, իսկ Միացյալ Թագավորությունում կասահմանափակվեմ **Անգլիայով**:

ա) Անգլիայի Case Law-ն հիմնված է նախադեպերի համակարգի վրա, որը ելնում է այն բանից, որ որևէ նոր որոշում սկզբունքորեն և պարտադիր կերպով պետք է կողմնորոշվի որևէ նախորդ որոշմամբ: Քաղաքացիական դատարանների պարագայում այս կախվածությունը հետևում է doctrine of stare decisis դոկտրինից: Ըստ այդ դոկտրինի պետք է կառչել արդեն որոշվածից (stare decisis = պահպանել որոշումները): Stare decisis (et non quieta movere) դոկտրինի կենտրոնական դրույթն այն է, որ վերադաս դատարանների որոշումները պարտադիր են ստորադասների համար (ուղղահայաց պարտադիր ներգործություն): Իսկ երբ դատարանն ինքն իրեն կաշկանդում է սեփական նախկին որոշումներով, ապա այդ դեպքում խոսում են հորիզոնական պարտադիր ներգործության մասին: Պարտադիր ներգործությունը ծավալում է ratio decidendi (որոշելու հիմք): Պարտադիր ներգործություն ունեն միայն նախադեպի վերաբերյալ որոշման էական հիմքերը (ratio decidendi): ratio decidendi չի համապատասխանում մայրցամաքային բնույթի օրենքի նման համընդհանուր իրավական դրույթի, այլ պահպանում է իր կոնկրետ գործի վրա հիմնված ուղղվածությունը, քանի որ պարտադիր ներգործությունը տարածվում է բացառապես նման գործերի վրա („like cases must be treated alike“): Այն կարելի է նկարագրել իբրև դատավորի կողմից որոշում կայացնելու կանոն, որը բխում է հիմնավորումից և հիմնված է որոշման կայացման համար էական նշանակություն ունեցող փաստերի վրա: Այնուամենայնիվ, բնավ էլ չկա միասնական կարծիք այն մասին, թե ինչումն է կայանում ratio decidendi-ն: Վճռի այն մասերը, որոնք չեն պարունակում որոշման կայացման համար էական հիմքեր, անվանվում են obiter dicta (things said by the way): Obiter dicta-ն որոշումների նախադեպային ներգործության մաս չեն կազմում, թեև դատավորները հաջորդ գործերը քննելիս կարող են կրել նման obiter dicta-ների ազդեցությունը: Ընդ որում խոսքն այսպես կոչված persuasive precedents` համոզիչ նախադեպերի մասին է: Գատարանը պարտավոր չէ դրանք հաշվի առնել binding precedents` պարտադիր նախադեպերի նման, դատարանը դրանք իր հայեցողությամբ է հաշվի առնում կամ ոչ:

բ) Գործում է այն սկզբունքը, որ որևէ դա-

տարանի կողմից որևէ գործով որոշում կայացնելիս կիրառված իրավական փաստարկը պարտադիր կերպով պետք է հաշվի առնվի հետագայում քննվող գործի պարագայում, եթե փաստական հանգամանքները բավարար չափով համեմատելի են: Անգլիական նախադեպային համակարգի համար անհրաժեշտ է, որ գոյություն ունենան իրավունքը զեկուցելու համակարգ (system of law reporting) և դատարանների աստիճանակարգ` հերարխիա (hierarchy of courts): Պարտադիր ներգործությունն իհարկե բացարձակ չէ, այն բաղկացած է շատ դիֆերենցված համակարգից: Որոշակի պատճառներով նախադեպային որոշումների կիրառումը կարելի է շրջանցել: Եթե վերադաս դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի որոշումը սխալ է, ապա կարող է վերացնել այն (overruling): Գատարանները պարտավոր չեն հետևել որևէ որոշման, եթե բոլոր գործերի ratio decidendi-ն համեմատելի չէ (distinguishing) քննվող գործի փաստական հանգամանքների հետ (Slapper/Kelly, The English Legal System, 10th ed. 2009-2010, 125).

Պարտադիր ներգործության գործնական նշանակությունը և սահմանները կարճ կարելի է նկարագրել հետևյալ կերպով: **Լորդերի պալատի** որոշումները պարտադիր էին բոլոր մյուս դատարանների, այդ թվում նաև Court of Appeal-ի` վերաքննիչ դատարանի համար: Լորդերի պալատի համար նախադեպային պարտադիր ներգործություն ունեին միայն Եվրոպական դատարանի որոշումները: Ինչ վերաբերում է հենց Լորդերի պալատի կողմից նախկինում ընդունված որոշումներին, ապա սկզբում գործում էր այն սկզբունքը, որ Լորդերի պալատն իրեն սկզբունքորեն կաշկանդված էր համարում հին որոշումներով: Սակայն, սկսած 1966 թվականից, Լորդերի պալատն անհրաժեշտության դեպքում շեղվում էր այդ սկզբունքից (Այսպես օրինակ Practice Statement-ում (Judicial Precedent) 1996 W.L.R. 1234 և Kleinwort Benson Ltd. v. Lincoln City Council and Others Appeals գործով որոշումում (1998) 4 All E.R. 513 H.L., որտեղ տրված է նաև հիմնավորում այն մասին, թե երբ է ողջամիտ շեղվելը նախկին ղեկավար որոշումից: Մինչև 1966 թ. Լորդերի պալատը շատ խիստ էր կիրառում այդ դոկտրինը: Այսպես կոչված Practice Statement-ից հետո նախնական որոշումների ներգործության պարտադիրությունը նվազել էր, քանի

որ Լորդերի պալատն այլևս չէր համարում, որ պարտադիր պետք է հետևի իր սեփական նախկին որոշումներին:

2009-ին **Գերագույն դատարանը՝ Supreme Court**, փոխարինեց Լորդերի պալատին իբրև Միացյալ Թագավորության բարձրագույն դատարան: Այս ռեֆորմը բխում էր 2005-ի Constitutional Reform Act-ից: Ռեֆորմի նպատակն էր ուժեղացնել դատական իշխանության անկախությունը օրենսդիր և գործադիր իշխանություններից: Նախադեպային որոշումների պարտադիր ներգործության սկզբունքները, որոնք գործում էին Լորդերի պալատի համար, պահպանվում են մաս Գերագույն դատարանի համար: Նոր դատարանը ևս միայն սահմանափակ իրավասություն ունի, դժվար հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու, զարգացնելու իրավունքը: Նվազ պարտադիր ներգործություն ունեն վերաքննիչ դատարանի՝ **Court of Appeal** և Պառլամենտի բարձր դատարանի՝ **High Court** որոշումները իրենց ստորադաս դատարանների համար:

III. Ամփոփիչ դիտարկում

1. Ներկայացված ուսումնասիրության մեջ ակնարկը ԵՄ-ի համար ներկայացուցչական իրավակարգերի մասին առնվազն երկու բան է ցույց տալիս. **պարտադիր ներգործություն** գերագույն դատարանների որոշումներն ունեն, եթե հանդես են գալիս որպես վճռաբեկ կամ ռեվիզիոն դատարան տարբեր ատյաններում կոնկրետ իրավական գործի քննության ժամանակ: Պետք է ընդունվի իրավական առումով ճիշտ որոշում: Դրա համար անհրաժեշտ է մաս պահպանել **դատական պրակտիկայի միասնականությունը**, համապատասխան վերահսկողությունը գերագույն դատարանների կարևորագույն խնդիրներից է: Այս **հիմնարար կանոնը կա ամբողջ Եվրոպական Միությունում**. մաս նրա սահմաններից դուրս, ինչպես ցույց է տալիս **Ռուսաստանի** օրինակը, Ռուսաստանի սահմանադրության **հոդվ. 106-ում** և այդ երկրի Զադաքա-ցիական դատավարության օրենսգրքի հոդվ. 369 ու հոդվ. 390 կետ 6.1.1 ու 2-ում սահմանված է այդ պարտադիր ներգործությունը տարբեր ատյաններում գործի քննության ժամանակ: Այդպիսի պարտադիր ներգործությունը ճիշտ է և սկզբունքորեն անպայման անհրաժեշտ: Թե ինչպես է դա արվում գործնականում, ես ներկայացրեցի:

Բայց բացարձակ պարտադիր ներգործու-

թյուն չկա: Կարող են փոփոխվել քննվող գործի փաստական հանգամանքները. առհասարակ ստորին ատյանների դատարանները, ելնելով իրենց տարբերակման հմտությունից, առավել կամ պակաս կախվածության մեջ են հայտնվում վերադաս դատարանների որոշումներից: Պարտադիր ներգործությունն սկզբունքորեն գոյություն ունի միայն նյութաիրավական կողմի համար, բայց այստեղ էլ այն վերաբերում է միայն որոշման կայացման համար էական կետին և չի վերաբերում obiter dicta-ին, որը այս կամ այն ծավալով կարող է տեղ գտած լինել վերադաս դատարանի որոշման մեջ: Ընդ որում ԵՄ պետություններն ունեն տարբեր ավանդույթներ. լայնածավալ obiter dicta-ների հաճախ հանդիպում ենք անգլիական որոշումներում, որոնք իրենց սեփական ռճն ունեն, և հազվադեպ՝ ֆրանսիական դատարանների կուռ ձևակերպումներ ունեցող որոշումներում:

2. Երկրորդ ասպեկտը կաշկանդվածությունն է **մշտական դատական պրակտիկայով**: Այստեղ էլ կան ընդհանրություններ ամբողջ ԵՄ-ում, ներառյալ Անգլիան և ամբողջ Միացյալ Թագավորությունը, թեև վերջիններում այլ ավանդույթ է իշխում: **Նախադեպային համակարգում** նախադեպն իր ազդեցությունը ծավալում է կոնկրետ գործի սահմաններից դուրս, բայց փորձառու օգտվողներին համակարգը կոնկրետ գործի առանձնահատկությունների ընդգծման միջոցով ընձեռում է տարբերակման և շեղման բազմապիսի հնարավորություններ:

ԵՄ մայրցամաքային հատվածում պարտադիր ներգործությունն **օրենքով** չի դրված դատավորի վրա, այլ նա ինքն է այն ստանձնում, ինչը հնարավոր ու ճիշտ է սահմանադրության լույսի ներքո և երաշխավորում է միասնական իրավական պրակտիկա ու իրավական անվտանգություն, սակայն բացարձակ բնույթ չունի:

Մեզ մոտ առկա է հետևյալ իրադրությունը. ելակետը կաշկանդվածությունն է օրենքով և իրավունքով: Օրենքով կաշկանդվածությունը բոլոր ատյանների անկախությամբ օժտված դատավորների համար նշանակում է, որ նրանք կաշկանդված չեն գործադիր իշխանության դիրեկտիվներով, որոնք չունեն իրավական նորմի որակ: Դատավորները նույն չափով կաշկանդված չեն մաս առաջին կողմից «մշտական դատական պրակտիկայով», որը գերագույն դատարանների, Գերմանիայում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մասնավորապես դաշնության գերագույն դատարանների և երկրամասերի գերագույն դատարանների կողմից օրենքի մեկնաբանման արդյունք է: Եթե դատավորը գիտակցաբար քամահրում է այդ մշտական դատական պրակտիկան, առանց դրա համար հիմքեր ունենալու, ապա նրա որոշումը հնարավոր է բեկանել վերադաս ատյաններում. դրանով նա ոչ մի լավ բան չի անում ոչ իրավակարգի, ոչ կողմերի և ոչ էլ հենց իր համար: Սակայն կոնկրետ գործով որոշում կայացնելիս, ինչը միայն ինքը կարող է անել որպես «օրենքով դատավոր», նա կարող է և շեղվել այդ մշտական դատական պրակտիկայից, եթե դրա համար հիմքեր է տեսնում: Դա այդպես է միայն այն դեպքերում, երբ «մշտական դատական պրակտիկան» հիմնված է նորմավորված իրավունքի որոշակի մեկնաբանության վրա, որն ինքը չի կարող կիսել իր կոնկրետ գործի առնչությամբ. այդպես կարող են խթաններ առաջանալ մշտական դատական պրակտիկան վերստուգելու կամ նաև վերանայելու համար, որոնց հետևանքում տեղի է ունենում իրավունքի զարգացում օրենսդրական ակտերի վրա հիմնված իրավունքի շրջանակում և կենդանի հասարակությունում, որում իրավունքը չի կարող լինել միայն ստատիկ մեծություն: Այդ անկախությունը և «մշտական դատական պրակտիկան» հարցականի տակ դնելու իրավասությունը դեր են խաղում նաև այնտեղ, որտեղ օրենսդրական ակտերի վրա հիմնված իրավունքում եղած «բացերը» լրացվել են դատավորների, հատկապես գերագույն դատարանների դատավորների իրավաստեղծ գործունեության շնորհիվ: Այդպիսի «դատավարական իրավունքը» կարող է դառնալ սովորության իրավունք, եթե բավականին երկար ժամանակ և բավականին ինտենսիվ իրականացվել է առանց այլ դատարանների կամ իրավագետների առարկության. այնուամենայնիվ, այստեղ էլ մեկ այլ գործ քննող դատավորի համար չի առաջանում այնպիսի պարտադիր ներգործություն, որն ունի օրենքը: Վերջինս կարող է «փր» գործի քննության ընթացքում շեղվել, այլ որոշում կայացնել և այդպես էլ կանի, եթե տեսնի դրա անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, պրակտիկան ցույց է տալիս, որ այդպիսի շեղումը բացառություն է կազմում: Սկզբունքորեն «մշտական դատական պրակտիկան» հաշվի է առնվում և դրվում հետագա որոշումների հիմքում, ընդ որում պատճառները պարզ

են. «մշտական դատական պրակտիկան, անխելամիտ ձևով չի կազմավորվում, այն իրենից ներկայացնում է լուծումների վերաբերյալ այնպիսի տեսակետ, որը համապատասխանում է իրավական պրակտիկային և գերիշխող իրավագիտակցությանը: Այդ դեպքում իրավական անվտանգությունն է պահանջում այն հաշվի առնել նաև ապագայում. դա նշանակում է իմանալ այն և նաև հիշատակել որոշման մեջ: Ինքնըստիներյան դա այդպես է հատկապես այն դեպքերում, երբ դատավորը ցանկանում է օգտվել շեղվելու իր իրավասությունից: Որոշումը թափանցիկ ձևակերպելու պահանջը հանգեցնում է հիմնավորման պարտականությանը և այնտեղ, որտեղ դա թույլատրում է դատավարական իրավունքը, նաև տարբեր ատյաններում շեղվող որոշման վերաքննության թույլատրությանը (ստորին դատարանից դեպ վերին): Այսպես խթաններ են առաջանում «մշտական դատական պրակտիկայի» վերանայման, ինչպես և զարգացման կամ հաստատման համար: Այս ազատությունը և անկախությունը նաև հիմք են կազմում այն բանի համար, որ վերադաս դատարանները, որոնք ձևակերպում են «մշտական դատական պրակտիկան» ու, իրենց որոշումները հրատարակելով, օժտում դրան արտաքին ներգործությամբ, ի վիճակի լինեն այն փոփոխելու կամ նույնիսկ դրանից հրաժարվելու: Պրակտիկան Գերմանիայում, ինչպես և այլ երկրներում, որոնց մասին խոսել եմ, տարբեր օրինակներով անընդհատ ցույց է տալիս, որ մինչև հիմա եղած դատական պրակտիկայի գիծը փոխվել, ձևափոխվել կամ մերժվել է: Կա նաև այն պրակտիկան, երբ հայտարարվում է, որ մինչև այժմ տարված գիծը հետագա գործերում չի շարունակվելու, և որ որոշումներն այլ եղանակով են կայացվելու: Այստեղ հստակորեն ի հայտ է գալիս վստահության պաշտպանության ասպեկտը, որը չափազանց կարևոր մասնակի ասպեկտ է հանդիսանում իրավական անվտանգության, որը պիտի երաշխավորի դատական պրակտիկան: Այսպիսով որպես սկզբունքային արդյունք պետք է դիտվի այն, որ դատավորների կողմից արդարադատության իրականացումը պիտի բխի կաշկանդվածությունից իրավունքով և օրենքով: Ակնհայտ է նաև, որ ԵՄ նման «իրավական շուկայում», որի կազմում կան ավելի քան 80 միլիոն բնակիչ ունեցող պետություններ (օր. Գերմանիան), արդարադատության իրականացումը չի կարող հրաժարվել նախադեպից,

կազուիստիկայից և «մշտական դատական պրակտիկայից», որն արտացոլում է իրավունքը և օրենքը իրավական պրակտիկայում: Այն երաշխավորում է համաչափություն, իրավական անվտանգություն և նորմի նկատմամբ պարզեցված մոտեցում և այդ իսկ պատճառով նաև ինքնանպատակ չէ: Հենց այդ պատճառով էլ դրանից չի բխում այնպիսի պարտադիր ներգործություն ապագայի համար, ինչպիսին հատուկ է օրենքին: Նախադեպը պետք է անընդհատ համոզի նորից ու նորից, այն «օրենք» չէ: Մայրցամաքային համակարգում օրենքով դրան այդպիսի աստիճան շնորհելը ճիշտ չէր լինի:

IV. Ամփոփում

Եթե ամփոփելիս լինեմ, ապա պետք է ընդգծեմ հետևյալ հիմնական կանոնները.

- սահմանադրական դատարանի՝ այն որոշումներով կաշկանդված լինելը, որոնք պարտադիր լինելու իրավունք ունեն, մենք դիտում ենք լեգիտիմ դրանց սկզբունքային ազդեցության պատճառով, որով դրանք նմանվում են օրենքներին,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Ստրասբուրգ) որոշումները վճռված գործով պարտադիր են ստրասբուրգյան վարույթում որպես կողմ հանդես եկած պետությանը: Ստրասբուրգյան

դատարանի որևէ որոշման ավելի հեռուն գնացող պարտադիր ներգործությանը պետք է մոտենալ խիստ դիֆերենցացված կերպով,

- Եվրոպական դատարանի (Ստրասբուրգ) որոշումները կարող են համաձայն Եվրոպական համայնքի իրավունքի՝ պարտադիր ներգործություն ունենալ, մասնավորապես խոսքը եվրոպական իրավունքի մեկնաբանմանը վերաբերող «նախնական որոշումների» մասին է: Սակայն սա (վերագրային) եվրոպական իրավունքի հատուկ դաշտն է,

- ԵՄ պետությունների իրավական իրադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերագույն դատարանների «մշտական դատական պրակտիկայի» պարտադիր ներգործությունն օրենքով կարգավորված չէ: Այդ ներգործությունը կա, դրա կարգավորված չլինելը թերություն չէ, այլ իրավունքի զարգացման նախադրյալ, քանի որ այդ զարգացումը տեղի է ունենում տարբեր ատյաններում տեղի ունեցող վարույթների և նաև համեմատելի առարկաներին վերաբերող հետագա վարույթների ընթացքում դատարանների փոխադարձ շփումների շնորհիվ:

ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող և քրեակատարողական ծառայությունների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի առաջին կարգի մասնագետ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քաղաքացիական հասարակության հոգևոր ոլորտը կոչված է ապահովելու մտքի, խոսքի ազատությունը, անհատի կողմից իր կարծիքը հրապարակայնորեն արտահայտելու իրական հնարավորությունը, ստեղծագործական միավորումների ինքնուրույնությունն ու անկախությունը: Այն անմիջականորեն կապված է մարդկանց կենսաձևի, նրանց բարոյականության, գիտական ստեղծագործության, հոգևոր կատարելագործման հետ: Այս ոլորտում գործում են մշակույթի գործիչների հասարակական միավորումներ, կրթական, ստեղծագործական միություններ, կրոնական կազմակերպություններ:

Քաղաքացիական հասարակության հասարակական հարաբերությունների հոգևոր ոլորտում կարևոր դերակատարում ունի սոցիալական այնպիսի ինստիտուտ, ինչպիսին եկեղեցին է: Եկեղեցին, կրոնը ձևավորում են մարդկային արժեհամակարգը, կարգավորում են մարդկանց սոցիալական վարքագիծը, նրանց հարաբերությունը հասարակության, ընտանիքի, այլ մարդկանց հետ: Եկեղեցին հաճախ ստանձնում է ազգային ինքնության, ավանդույթների, բարոյականության հիմքերի և մշակույթի պահպանման առաքելությունը:

Անդրադառնալով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական կարգավիճակին՝ պետք է նշել, որ այն ունի իրավաբանական անձի կարգավիճակ՝ արտահայտված կրոնական կազմակերպության կազմակերպատանական ձևով, և նրա վրա տարածվում են իրավաբանական անձանց առնչվող քաղաքացիական օրենսգրքի

համապատասխան նորմերը: Կրոնական կազմակերպությունների, այդ թվում՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական կարգավիճակին առնչվող ընդհանուր նորմերը ներառված են «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում, որը բաղկացած է նախաբանից և 6 գլխից:

ժամանակակից հայ հասարակության հոգևոր կյանքը (քաղաքացիական հասարակության հոգևոր ոլորտը) էականորեն տարբերվում է խորհրդային հասարակարգից գաղափարական բազմազանությամբ, պետական կամ պարտադիր գաղափարախոսության բացակայությամբ, խղճի և դավանանքի ազատությամբ, մտքի և խոսքի ազատությամբ, գրական, գեղարվեստական, գիտական, տեխնիկական և այլ տեսակների ստեղծագործության ազատությամբ և այլն:

Քաղաքացիական հասարակության ձևավորումը հաջողությամբ իրագործվում է աշխարհիկ¹ պետության պայմաններում, որտեղ որևէ կրոն չի հռչակվում պաշտոնական կամ պարտադիր: Աշխարհիկ պետությունում պետության և եկեղեցու գործունեության ոլորտները սահմանազատված են, նման պետությունում կրոնական կազմակերպությունները ապաքաղաքական վերկուսակցական կազմակերպություններ են, պետական գործառույթներ չեն կատարում, քաղաքականությամբ չեն զբաղվում: Աշխարհիկ պետությունում գործող կրոնական միավորումները, եկեղեցական կանոնները և նորմերը չեն կարող ազդել պետական կարգի, պետական մարմինների և նրանց պաշտո-

նատար անձանց գործունեության, պետական կրթական համակարգի և պետության գործունեության այլ ոլորտների վրա: Իր հերթին պետությունը չի խառնվում կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությանը, որոնք ստեղծվում և գործում են իրենց սեփական աստիճանական կառուցվածքին և կանոններին համապատասխան²: Այս առումով շատ կարևոր է 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական քվեարկությամբ ընդունված և 2005թ. նոյեմբերի 27-ին փոփոխված Սահմանադրության 8.1 հոդվածը, համաձայն որի՝ եկեղեցին անջատ է պետությունից: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով: Սրանով ըստ էության Սահմանադրությունը ընդգծում է Հայաստանի Հանրապետության աշխարհիկ բնույթը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով քաղաքացիական հասարակության ձևավորման համար, քանի որ աստվածապետություններում, ինչպես օրինակ Վատիկանը և Սաուդյան Արաբիան, որտեղ պետական իշխանությունը ամբողջովին պատկանում է եկեղեցական հիերարխիային³, քաղաքացիական հասարակության ձևավորումը հնարավոր չէ:

Հայաստանի Հանրապետությունը, սահմանադրորեն ճանաչելով հայ ժողովրդի հոգևոր կյանքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ առաքելությունը, նրա դերն ու նշանակությունը հայապահպանության, աշխարհասփյուռ հայերի միավորման, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում, սահմանադրորեն Հայ առաքելական եկեղեցու հետ հարաբերություններին վերապահեց նախապատվություն և նրա հետ հաստատեց առանձնահատուկ հարաբերություններ: Նման հարաբերությունների հաստատումը չի նշանակում, որ Հայ առաքելական եկեղեցուն վերապահվեց հանրային-իրավական կարգավիճակ, այն դարձավ պետական, գաղափարական, սոցիալական ոլորտներում լիիրավ մասնակից: Ինչպես Հայ առաքելական եկեղեցու, այնպես էլ

այլ կրոնական կազմակերպությունների մասնավոր-իրավական կարգավիճակը սահմանելիս պետությունը կրոնին և եկեղեցուն վերապահել է ոչ թե պետաքաղաքական, այլ սոցիալ-մշակութային գործառույթ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ազգային կարգավիճակն ընդգծելը բնավ չի հակասում օրենքի առջև կրոնների և կրոնական կազմակերպությունների հավասարության սկզբունքին, չի նսեմացնում այլ եկեղեցական կազմակերպությունների դերն ու նշանակությունը, քանի որ ըստ սահմանադրության և գործող օրենսդրության՝ բոլոր կրոնական կազմակերպություններն ունեն հասարակության բարոյահոգեբանական ներուժի պահպանությանը և զարգացմանը մասնակցելու հավասար հնարավորություններ⁴:

Անհրաժեշտ է նշել, որ մինչև Հայաստանի Հանրապետության սահմանադրության ընդունումը, Հայաստանի Հանրապետության՝ աշխարհիկ պետություն լինելու փաստն ամրագրվել է դեռևս 1991թ. հունիսի 17-ին ՀՀ գերագույն խորհրդի կողմից ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով: Այդ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության եկեղեցին անջատված է պետությունից⁵: Միևնույն ժամանակ օրենքը նշում է, թե պետությունն ինչ իրավունք չունի և ինչ պետք է անի կրոնական կազմակերպությունների հետ հարաբերություններում:

Այսպես, պետությունն իրավունք չունի քաղաքացուն հարկադրել դավանելու այս կամ այն կրոնը, չի միջամտում եկեղեցու և կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կյանքին, արգելում է եկեղեցու և կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեություն, արգելում է եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, եկեղեցու և կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որևէ պետական ֆունկցիա:

ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով ար-

տահայտելու ազատությունը:

Խղճի ազատությունը մարդու իրավունքն է՝ մտածել և գործել իր համոզմունքներին համապատասխան, դա մարդու բարոյական ինքնագնահատականի անկախությունն է: Միևնույն ժամանակ պատմականորեն խղճի ազատության մեկնաբանման սահմանները նեղացել են. այն առավելապես ընկալվում է որպես կրոնի ոլորտի ազատություն՝ դիտվելով պետության և եկեղեցու հարաբերությունների համատեքստում: Այսպիսով, խղճի ազատության հարցադրումը մարդու հոգևոր ազատության հարցադրումն է, անհատի հոգևոր կյանքի այն ոլորտի առկայության հիմնախնդիրը, որտեղ թափանցելու իրավասություն չունի որևէ իշխանություն, հասարակական կամ այլ կազմակերպություն: ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի իմաստով կրոնի ազատության իրավունքը մարդու իրավունքն է դավանել ցանկացած կրոն կամ չդավանել որևէ կրոն, իրականացնել կամ չիրականացնել կրոնական ծեսեր ու արարողություններ: Կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությանը կամ կրոնական ծեսերի կատարմանը խոչընդոտելու համար նախատեսված է քրեական պատասխանատվություն⁶:

Խղճի և կրոնի ազատության իրավունքի երաշխիքն իր մեջ ներառում է.

1. քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ կրոնի նկատմամբ նրանց վերաբերմունքից,
2. քաղաքացիների իրավունքների սահմանափակման անթույլատրելիությունը՝ կրոնական պատկանելիության շարժառիթներով,
3. կրոնական կազմակերպությունների տարանջատումը պետությունից,
4. կրոնական կազմակերպությունների հավասարությունը օրենքի առջև⁷:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է քաղաքացիների խղճի և կրոնական դավանանքի ազատությունը: Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն որոշում է իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր:

ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ քաղաքացիների հետ հավասար օգտվում

են մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքից և հավասար պատասխանատվություն են կրում այս ոլորտի օրենսդրության խախտման համար:

Նշված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները օրենքի առջև հավասար են քաղաքացիական, քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից:

Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը, կարող է անցնել այլընտրանքային ծառայության⁸:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախաբանում ընդունվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցու, հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման կարևոր պատվար լինելու հանգամանքը:

Իրոք, 1700-ամյա Հայոց եկեղեցին իր պատմական ճանապարհին շատ դժվարություններ ու հալածանքներ է կրել, միասնականությունը կորցրած հայ ժողովրդի համար բազմիցս ստանձնել է քաղաքական իշխանության գործառնություն, հայ ժողովրդի փոշիացման դատապարտված բեկորները համախմբել իր շուրջը և նրա մեջ սերմանել ապրելու և գոյատևելու հավատ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր կազմավորման վաղ ժամանակաշրջանից մինչ այսօր պահպանում է հանդիսացել հայ ժողովրդի ստեղծած մշակութային բացառիկ արժեքների: Վանքերում ու եկեղեցիներում են ստեղծվել մեր գրականության, արվեստի ու մշակույթի այնպիսի գոհարներ, որոնք փառք ու ճանաչում կարող էին բերել ցանկացած ժողովրդի: Հայ գրերի ստեղծողը Եկեղեցու վարդապետն էր, եկեղեցու սպասավորներն էին, նաև մատենագիր մատյանների գրիչներն ու հոգևոր գմայելի շատ երգերի հեղինակները: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի հսկայական մշակութային ժառանգություն՝ ճարտարագիտական և գեղանկարչական հուշարձաններ, հարուստ երաժշտական ու գրական գործեր: Այն միշտ անմիջական ազդեցություն է ունեցել մեր ժողովրդի նկարագրի ձևավորման գործում և օգնել է պահպանել մեր ժառանգությունը դարերի

ընթացքում: Մեծ է նաև եկեղեցու ավանդը մեր ժողովրդի հայեցի կրթության ու դաստիարակության գործում:

Հետխորհրդային Հայաստանը անցնում է պատմական ուղի, որի միջով անցել է ամբողջ Եվրոպան դեռևս 19-րդ դարում՝ «հասարակություն-պետություն»-ից քաղաքացիական հասարակության: Կապիտալիզմի զարգացումը, մասնավոր սեփականության ամրապնդումը և երրորդ դասի (միջին խավի) ձևավորումը պայմանավորեցին այն սահմանները, որը պետական իշխանությունը չէր անցնում. մարդու իրավունքներ՝ ընկած ժողովրդավարական պետության սահմանադրական կարգի հիմքում:

Մարդու իրավունքների շրջանակներում (անձնական կյանք, սեփականություն և այլն) ձևավորվել է ինքնուրույն սոցիալական հարթություն՝ պետական կյանքից անկախ և նրան հավասար՝ քաղաքացիական հասարակության կենսական միջավայրը: Քաղաքացիական հասարակության կյանքի բովանդակությունը կազմող հարաբերությունները իրենց զարգացման արդյունքում ընդգրկեցին ոչ միայն մասնավոր, այլ նաև հասարակական ու քաղաքական կյանքի զգալի մասը: Կուսակցությունները, հասարակական կազմակերպություններն ու շարժումները, հասարակական կարծիքն ու զանգվածային լրատվամիջոցները հարստացրին սոցիալական կյանքը, որում պետությունը դարձավ հասարակական կյանքի մասնավոր տարր:

Ժամանակակից ժողովրդավարական պետությունում եկեղեցին հանդիսանում է հասարակության բարոյական արժեքների կարգավորիչը, նրա բարոյական ավանդույթների և հիմքերի կրողը: ՀՀ Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետությունը հռչակելով աշխարհիկ պետություն, միաժամանակ օրյեկտիվորեն ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Սահմանադրական այս նորմին լիովին համապատասխանում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պետության պարտավորությունը՝ չխոչընդոտելու ազգային եկեղեցու մենաշնորհի հանդիսացող հետևյալ առաքելությունների իրագործմանը.

- ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում,

- վերստեղծել իր պատմական ավանդույթները, կառուցվածքը, կազմակերպությունները, թեմերն ու համայնքները,

- կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրեն պատկանող պատմական հուշարձան-եկեղեցիները՝ ինչպես հավատացյալների խնդրանքով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ,

- նպաստել հայ ժողովրդի հոգևոր կրթությանը, օրենքով սահմանված կարգով նաև պետական կրթական հաստատություններում,

- գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը,

- ծավալել բարեգործական և բարեխնամ գործունեություն,

- ունենալ մշտական հոգևոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, զառամյալների և հաշմանդամների տներում, զորամասերում, ազատագրված վայրերում՝ ներառյալ քննչական մեկուսարանները:

Անհրաժեշտ է փաստել, որ օրենքի ուժով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպես ազգային եկեղեցի ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝ միջազգային իրավական նորմերի սահմաններում:

Ժամանակակից հասարակության հոգևոր կյանքի հետ սերտորեն կապված է նրա կյանքի տեղեկատվական մասը (քաղաքացիական հասարակության տեղեկատվական ոլորտը), որի հիմքում ընկած է յուրաքանչյուրի «Խոսքի ազատության իրավունքը՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից» (ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մաս):

Սակայն տեղեկատվության ազատությունը ենթակա է օրենքով նախատեսված որոշակի սահմանափակումների. մասնավորապես, տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել, եթե այն պարունակում է պետական, ծառայողական, բանկային առևտրային գաղտնիք, խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները, բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական

գաղտնիք), խախտում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները:

Ավելի քան 20 տարի մեր երկրում տեղի ունեցող արմատական փոփոխությունները առնչվում են նաև առաքելական եկեղեցուն. նրա դերն ու կարգավիճակը հասարակության սոցիալական կառուցվածքում կրել են զգալի փոփոխություններ, որոնց էությունը հանգում է պետությունից դեպի հասարակություն եկեղեցու շրջադարձին:

Եկեղեցու՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի առանձնահատուկ դերն արտահայտվում է մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների կենսագործման պրոցեսում: Ժամանակակից եկեղեցին, ի դեմս իր հոգևորականների, իշխանության հետ հարաբերություններում պաշտպանում է հավատացյալների սահմանադրական իրավունքը՝ քարոզելու իրենց կրոնական համոզմունքները (ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդված) և ազդելու հասարակական կյանքի վրա: Ավելին, պետությունը երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հավասարությունը՝ ներառյալ անկախ կրոնի նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքը: Արգելվում է խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից (ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի 2-րդ մաս):

Իր աշխարհայացքային առանձնահատկություններից ելնելով՝ չնայած Հայաստանյաց Առաքելական սուրբ եկեղեցին առաջին տեղում չի դասում մարդու երկրային կյանքն ու նրա հետ կապված երևույթները՝, սակայն ժամանակակից հայկական օրենսդրությանը հայտնի մարդու իրավունքների մեծ մասը, այդ թվում՝ տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքները, լիովին համապատասխանում են առաքելական եկեղեցու պատկերացումներին այն պայմանների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են մարդկային անհատականության նորմալ կենսապահովման համար:

Անհրաժեշտ է փաստել, որ մարդու որոշ սահմանադրական իրավունքներ դեռևս հազարամյակներ առաջ վառ կերպով, սակայն այլ մեկնաբանմամբ նշված են եղել Աստվածաշնչում: Այս-

պես, կյանքի սահմանադրական իրավունքը (հոդված 15) բխում է Աստվածաշնչյան «Մի՛ սպանիր» պատվիրանից: Սահմանադրական այն նորմը, որ չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար (36-րդ հոդվածի 3-րդ մաս) ըստ էության նույնպես բխում է Աստվածաշնչյան պատվիրանից, որում ասվում է. «Հարգիր հորդ ու մորդ»:

Աստվածաշնչյան այն պատվիրանում, ըստ որի՝ «Միրի՛ր հարազատիդ ինչպես քեզ», պարունակում է մարդու և քաղաքացու միանգամից մի քանի իրավունք և ազատություն, որոնք (հիարկե, հաշվի առնելով պատմական դարաշրջանը, երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակը) արտահայտվում են սահմանադրաիրավական մի քանի նորմերում.

- բոլոր մարդկանց հավասարությունը օրենքի առջև (ՀՀ սահմանադրության 14.1 հոդվածի 1-ին մաս),

- մարդու արժանապատվության պաշտպանությունը պետության կողմից (ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդված),

- խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի անթույլատրելիությունը (ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդված),

- յուրաքանչյուրի՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված) և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ հայ քրիստոնյաների մեծամասնության համար հավատքը, կրոնը, հայրենիքը ավելի վեր են կանգնած, քան մարդու իրավունքները, նույնիսկ՝ կյանքի իրավունքը¹⁰:

Այսօր քրիստոնեությունն այլևս իշխող կրոնական ուժ չի հանդիսանում. այն փոքրամասնություն է՝ կազմված տարբեր, իսկ երբեմն էլ հակադիր ուղղություններից: Մյուս կողմից, չնայած պետությունն արդեն ինքնուրույն (առանց եկեղեցու) երկրային ուժ է, սակայն եկեղեցին չի կարող իր ուսերից վայր դնել հասարակությունում տիրող իրավիճակի կրոնական պատասխանատվությունը, իսկ պետությունը միևնույն ժամանակ պետք է ապահովի ու պաշտպանի իր քաղաքացիների կրոնական ու մշակութային իրավունքները: Պետությունը պետք է ծառայի բոլոր քաղաքացիներին՝ քրիստոնյաներին, այլադավաններին, անհավատներին: Պետությունը պետք է ընդունի, որ երկրային բարոյական չափանիշներն անկատար են ու անբավարար: Միայն ժողովրդավարական մեծամաս-

նության սկզբունքը բավարար չէ, քանի որ մեծամասնությունը միշտ չէ, որ ճիշտ է, հետևաբար փոխհամաձայնությունը հանդիսանում է ժողովրդավարության անբաժանելի մասը:

Պետությունը չի կարող ինքնուրույն իր համար սահմանել նորմեր ու սկզբունքներ, այլ հենվում է այն արժեքների վրա, որոնք ինքն ինքնուրույն ձևավորել ունակ չէ: Պետությունը հենվում է քրիստոնեական պատմությամբ ստեղծված արժեհամակարգերի վրա, նույնիսկ եթե տվյալ պետությունը ձևականորեն քրիստոնեական չի համարվում: Մարդու և հասարակության իդեալները հիմնվում են քրիստոնեական ավանդույթների վրա, եթե նույնիսկ խոսքը չի գնում մարդու՝ հավատացյալ լինելու կամ չլինելու մասին:

Պետությունը հատկապես հարգում է կրոնական ավանդույթներն այն դեպքում, եթե հասարակության և ժողովրդի մշակույթը ձևավորվել է կրոնական ժառանգությամբ: Միևնույն ժամանակ պետությունը պետք է պաշտպանի նաև կրոնական փոքրամասնությունների իրավունքները: Պետությունը հաճախ եկեղեցու պատասխանատվությանն է հանձնում առողջապահության, միջին և բարձրագույն կրթության ոլորտների որոշ ուղղություններ՝ եկեղեցուն տրամադրելով համապատասխան ֆինանսավորում: Այսպիսով, եկեղեցու հովանու ներքո ձևավորվում են այսպես ասած «կղզյակներ», որոնց միջոցով եկեղեցին հնարավորություն է ստանում ցուցադրել մարդկային բարօրության կապակցությամբ իր ամբողջ մտահոգությունը: Իհարկե, եկեղեցին պետք է հետևի տվյալ ոլորտներում գործող, պետության կողմից սահմանված որոշ կանոնների:

Եկեղեցին աստիճանաբար վերածվում է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցի, որտեղ կարևոր է հենց քաղաքացիների և ոչ թե պետության նախաձեռնությունը: Բոլոր եկեղեցիները, կրոնական համայնքներն ու կազմակերպությունները պետք է ներառվեն քաղաքացիական հասարակության մեջ: Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակությունը ձևավորվում է միայն այսօր, երբ Հայաստանի քաղաքացիները սկսում են սովորել ապրել քաղաքացիական հասարակությունում՝ դեռևս լիարժեք չպատկերացնելով, թե ինչ է դա:

Հայաստանում 20-րդ դարի վերջին հռչակված հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման և իրավական պետության ստեղծման գաղափարները հիմնարար կերպով

փոխում են պետության՝ որպես հասարակության քաղաքական համակարգի հիմնական ինստիտուտի և եկեղեցու փոխհարաբերությունները: Այսպիսի պայմաններում, երբ եկեղեցին սկսում է կարևոր դեր խաղալ հասարակության կյանքում, խիստ արդիական է դառնում պետա-եկեղեցական հարաբերությունների նոր կոնցեպցիայի մշակման հիմնախնդիրը, որն արտացոլված է ՀՀ Սահմանադրությունում:

Այս առումով շատ կարևոր է «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» 2007թ. փետրվարի 22-ի ՀՀ օրենքը: Վերջինս իրենից մեծ կարևորություն է ներկայացնում ոչ միայն հավատացյալների, այլ նաև ողջ հասարակության համար, քանի որ այն կարգավորում է Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունները (հոդված 1), իսկ Հայաստանի Հանրապետության և եկեղեցու հարաբերությունների կարգավորման ընդհանուր սկզբունքները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և միջազգային պայմանագրերով:

Օրենքում թվարկված են այն ոլորտները, որոնցում համագործակցում են պետությունն ու եկեղեցին. դա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտամունքային կառույցների և մշակութային հաստատությունների պահպանության ոլորտն է, կրթական բնագավառը, ամուսնությունների և ամուսնալուծությունների գրանցմանն առնչվող խնդիրները, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարեխնամ գործունեությունը, ինչպես նաև եկեղեցու և իրավապահ մարմինների միջև համագործակցությունը:

«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» 2007թ. փետրվարի 22-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական աթոռներով, և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնակառավարումն իր նվիրապետության սահմաններում:

Օրենքի այս նորմը լիովին համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը և պայմանավորված է այն մեծ ավանդով, որն ունեցել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հայ ժողովրդի կյանքում:

Ժամանակակից աշխարհում պետությունը սովորաբար ունի աշխարհիկ բնույթ և կաշկանդված չէ ինչ-որ կրոնական պարտավորություններով: Նրա համագործակցությունը եկեղեցու հետ սահմանափակված է կոնկրետ ոլորտներով և հիմնված է միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքի վրա: Սակայն, որպես կանոն, պետությունը գիտակցում է, որ երկրային բարեկեցությունն անհնար է առանց որոշակի բարոյական նորմերի պահպանման, այն նորմերի, որոնք անհրաժեշտ են մարդկանց փրկության համար: Այդ պատճառով էլ պետության և եկեղեցու նպատակներն ու գործունեությունը կարող են համընկնել ինչպես երկրային բարեկեցությանը հասնելու համար, այնպես էլ եկեղեցու՝ մարդկանց փրկելու առաքելության իրագործման համար, սակայն եկեղեցին չի կարող իր վրա վերցնել պետական գործառնություններ: Միևնույն ժամանակ եկեղեցին կարող է դիմել պետությանը՝ անհրաժեշտության դեպքում իշխանությունը օգտագործելու համար, սակայն այդ հարցի լուծումը կախված է պետությունից: Պետությունը չի միջամտում եկեղեցու գործունեությանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ եկեղեցին անմիջական հարաբերության մեջ է մտնում պետական իշխանության օրենսդիր ու գործադիր մարմինների հետ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը ազգային ինքնության հենքի կարևոր և անբաժանելի մասն է:

Այդ արժեքների՝ պետական սեփականություն հանդիսացող հատվածը կարող է օտարվել կամ պահպանման վայրից փոխադրվել՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերություններին՝ պետք է նշել, որ օրենքով Եկեղեցուն իրավունք է վերապահված կառուցելու վանքեր, եկեղեցիներ և պաշ-

տամունքային այլ շինություններ, գործող դարձնելու պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող վանքերն ու եկեղեցիները, որոնց պահպանությունը Եկեղեցին և Հայաստանի Հանրապետությունը իրականացնում են համատեղ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ձգտում է հավատացյալներին հաղորդել դարերի ընթացքում կուտակված պատմական և մշակութային ժառանգությունը խոսքի, գրականության, աղոթքի և ժամերգությունների միջոցով: Եկեղեցու սրբազան ավանդույթները, հավատալիքները, խորհուրդները և ծիսական արարողությունները ծառայում են հավատացյալների հոգևոր և կրթական պահանջների բավարարմանը: Ժամանակակից հաղորդակցության միջոցները թույլ են տալիս արդիականացնել ամենօրյա դասերի մատուցման ձևերը: Ռ-ադիոն, հեռուստատեսությունը, իսկ այժմ նաև ինտերնետը նպաստում են եկեղեցի-ժողովուրդ կապին:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, կարևոր դերակատարություն ունենալով կրթական ոլորտում, դրանով նպաստում է քաղաքացիական հասարակության բարոյական արժեքների ու նորմերի, մարդկանց մեջ քրիստոնեական արժեհամակարգի ձևավորմանը: Այսպես, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի՝

1) հիմնելու կամ հովանավորելու նախադպրոցական հաստատություններ, տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում,

2) մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները,

3) պետական կրթական հաստատություններում կամավոր ուսումնական դասընթացներ կազմակերպելու՝ օգտագործելով դրանց շենքերն ու ռեսուրսները, այդ հաստատությունների հետ համաձայնեցնելով դասընթացների իրականացմանն առնչվող խնդիրները,

4) նպաստելու հասարակության հոգևոր կրթությանը կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով:

Article also reflects the case law on the interpretation of implementation of this Agreement. It also the relationship between WTO law and the national law of WTO members. One of the other issues discussed in article concerns to the direct effect of WTO law in the national legal system. This article presents a number of issues relating to interpretation, implementation, development of the WTO law and gives options for resolving these issues.

ՄԵԼԻՔ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

ԵՊԲՀ իրավագիտական բաժնի պետ,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի, քրեական և քրեական դատավարության իրավունքի
ամբիոնի հայցորդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ (Կրճատումներով)

Հայ իրավունքը և իրավագիտության պատմությունը իր տարբեր դրսևորումներով և յուրահատկություններով հանդերձ ուշադրության արժանի է և գնահատելի: Այնուհանդերձ, Հայաստանում ժամանակի հրամայական պահանջ է իրավական նոր զարգացումների, այն է՝ պետության և նրա կառուցակարգերի համար ազգային իրավական համակարգի ստեղծումը և կայացումը: Այս առումով անհրաժեշտություն է հետազոտել և ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության իրավական բարեփոխումների գործընթացը՝ գնահատելու համար նրա նշանակությունը պետության զարգացման և իրավական կառուցակարգերի կայացման գործում: Պետական իրավական զարգացումների գործընթացի ուսումնասիրությունը թույլ կտա հետագա իրավական բարեփոխումների համար ստեղծել հետազոտված և համակարգված հիմք:

Իրավական բարեփոխումների իրականացման հիմնական նպատակը պետության զարգացմանը նպաստելն է, որը պետք է իրականացվի հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց՝ հաշվի առնելով **հասարակական պահանջը**, վերջնական նպատակ ունենալով ստեղծել անվտանգ և բարեկեցիկ երկիր: Միայն կայացած իրավական պետության առկայության պայմաններում է հնարավոր անվտանգ և բարեկեցիկ հասարակության գոյատևումը այդ պետության տարածքում:

Ցանկացած պետության մեջ իրականացվում են բարեփոխումներ, յուրաքանչյուր պետության մեջ տարբեր դրսևորումներով: Բնականաբար, բռնատիրական համակարգ ունեցող պետություններում բարեփոխումների գործընթացը որպես կանոն նպատակ չի հետապնդում դեմոկրատացնելու կառավարման համակարգը, այլ ընդամենը իրականացվում են այնպիսի փոփոխություններ, որոնք ավելի կամրապնդեն իշխանությունների

դիրքերը կամ նպաստավոր պայմաններ կստեղծեն այդ համակարգը սպասարկող ձեռնարկատիրական գործունեության համար: Աշխարհայինը տուրք տալու համար պետք է ասենք, որ ժամանակին խորհրդային միության մեջ իրականացվել են այնպիսի բարեփոխումներ, որի հետևանքով ավելի են պաշտպանվել մարդկանց սոցիալական իրավունքները: Սակայն դրանք բացառություններ են և որպես կանոն «բարեփոխումները» բնորոշ են զարգացող և զարգացած պետություններին: Չարգացող պետություններում բարեփոխումների գործընթացներն իրականացվում են առավել ինտենսիվ և արմատական՝ հաշվի առնելով այդ պետություններում՝ արագ և համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը, իսկ որոշ պետություններում նաև անցումային շրջանը (օրինակ՝ նախկին խորհրդային հանրապետությունները կամ սոցիալիստական ճամբարի պետությունները): Այլ է իրավիճակը զարգացած երկրներում, որտեղ բարեփոխումները ուղղվում են հիմնականում առկա համակարգերի կատարելագործմանը: Որոշ եվրոպական երկրներում նույնիսկ կան ամրագրված կանոններ, որտեղ պարտադրվում է օրենսդրին կամ տվյալ օրենսդրության պատասխանատու իրավակիրառող պետական կառավարման մարմինն ժամանակ առ ժամանակ նախաձեռնել օրենսդրական բարեփոխումներ՝ հաշվի առնելով հասարակական պահանջը և կիրառման արդյունքում առաջացած թերությունները:

Խոսելով Հայաստանում իրականացվող բարեփոխումների մասին՝ պետք է փաստենք, որ ներկայումս երկիրը լուրջ բարեփոխումների կարիք ունի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունը շարժվում է ժողովրդավարական ճանապարհով՝ բարեփոխումների գործընթացն անհրաժեշտ է իրականացնել արմատական՝ հասարակական, տնտեսական գործընթացների զարգացմանը

համընթաց և առավել ինտենսիվ՝ կարևորելով դրանց անհրաժեշտությունը երկրի զարգացման գործում: Բնականաբար այդ գործընթացում օժանդակող և կարգավորիչ դեր ունի իրավական բարեփոխումների գիտական հիմնավորված և հասարակական, քաղաքական, տնտեսական զարգացումները հաշվառած ուսումնասիրություններն ու հետազոտությունները: Հայ իրավագիտությունը այս առումով դեռևս անցնելու ճանապարհ ունի՝ հաշվի առնելով պետական շինարարության անցումային ժամանակաշրջանը, ինչպես նաև ժամանակակից մարտահրավերները: Ինչևիցե, առավել սեղմ իրավական բարեփոխումները կարելի է բնորոշել հետևյալ կերպ.

- Իրավական բարեփոխումներն անընդհատ իրականացվող գործընթաց է, որի նպատակը հասարակական, տնտեսական, քաղաքական գործընթացների զարգացումներին համընթաց իրավական անհրաժեշտ ռեժիմի սահմանումն է:

Բարեփոխումների գործընթացը պետք է նպաստի պետության կառավարմանը ժողովրդի մասնակցության արդյունավետության բարձրացմանը, հասարակական, տնտեսական և այլ ոլորտներում պարբերաբար առաջացող խնդիրների վերահանմանը և լուծմանը: Բարեփոխումները պետք է լինեն հիմնավորված և ժամանակին: Իրավական բարեփոխումները, ինչպես արդեն նշվեց, պետք է հիմք հանդիսանա պետության և պետական համակարգերի, ինչպես նաև սահմանադրական բարեփոխումների իրականացմանը:

Իրավական բարեփոխումների գործընթացում սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հիմնականում պետական համակարգի կանոնակարգման և մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ սահմանումներ տալու կարևորությամբ: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, հայ իրավական միտքը գիտակցել է պետության գլխավոր կանոնակարգի անհրաժեշտությունը: Անառարկելի է, որ 1773 թվականին Շահամիր Շահամիրյանի կողմից մշակված «Ռոդգայթ փառաց» աշխատությունը հայազիտական գնահատելի իրավական հուշարձաններից է, որտեղ մասնավորապես սահմանվում է անձի ազատությունների և իրավունքների գերակայության մասին դրույթներ՝ անկախ նրանց դրությունից, ինչպես նաև կառավարման վերաբերյալ կանոնների ժողովրդավարացմանը ուղղված դրույթներ: Պետական շինարարության, պետական նոր մտածողության ներդրման և արդար ու

իրավական պետականության հաստատման առումով գտնում ենք, որ «Ռոդգայթ փառաց» աշխատությունը հայկական սահմանադրական զարգացումների ուսանելի արժեք կարող է հանդիսանալ²:

Պետությունների համաշխարհային զարգացումների ընթացքը ցույց է տալիս, որ սահմանադրության ընդունման փաստը գրեթե բոլոր պետություններում անցած և հաստատված գործընթաց է: Որպես կանոն սահմանադրությունները ընդունվում են ազգերի ինքնորոշման, անկախության, պետականության ստեղծման, ինչպես նաև ազգային ազատագրական պայքարի, հեղափոխությունների, հեղաշրջումների, միապետության տապալման արդյունքում: Ինչպես հայտնի է, Հայաստանի առաջին հանրապետությունը իր գործունեության կարճ ժամանակահատվածի պատճառով լուրջ օրենսդրություն չձևավորեց, այդ թվում՝ հիմնական օրենք: Սակայն երկրող հանրապետությունում գործում էր սահմանադրություն, որն ընդունվել էր կոմունիստական հեղափոխության արդյունքում: Երրորդ հանրապետության սահմանադրությունը՝ անկախության հռչակման արդյունք էր:

Սահմանադրության ընդունումը մեծ մասամբ կամ որպես կանոն զուգորդվում է անցումային գործընթացներով: Շատ երկրներում սահմանադրության ընդունումը դառնում է քաղաքացիական պատերազմը կանխելու, տարածքային ամբողջականությունը պահպանելու, ինչպես նաև պետական իշխանությունը ձևավորելու միջոց: Սակայն իր ժամանակի առումով ճիշտ և արդարացված սահմանադրությունը իր կառուցվածքով և հիմնադրույթներով տարիների, տասնամյակների ընթացքում կարող է վերածվել իրավաբանական մի փաստաթղթի, որը կարող է չարտացոլել տվյալ ժամանակաշրջանի պահանջները: Խոսքը հավասարապես վերաբերում է և՛ մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին, և՛ պետական իշխանության կազմակերպմանն ու իրականացմանը: Պետական, հասարակական, տնտեսական հարաբերությունները զարգանում են՝ իրենց հետ բերելով նոր իրավահարաբերությունների անհրաժեշտություն, ինչպես նաև պետության կառուցվածքի և կառավարման ձևերի կատարելագործման անհրաժեշտություն: Այս տեսանկյունից սահմանադրությունը կարգավորիչ դեր ունի, ինչպես զարգացող հարաբերությունների կանոնակարգման, այնպես էլ՝ սահմանադրությամբ այնպիսի ճկուն մեխանիզմների ներդրման տեսանկյունից, որոնք այլ օրենսդրությանը զարգացման և անընդհատ

կատարելագործման հնարավորություն կտան:

Հարկ է նշել նաև, որ սահմանադրական նորմերը քարացած չեն և ժամանակ առ ժամանակ դրանք որոշակի զարգացումների գործընթաց են ապրում, այսինքն՝ կամ փոփոխությունների են ենթարկվում, կամ էլ ուղղակի փոխարինվում են նոր սահմանադրությամբ: Սահմանադրությունը, որպես կանոն, ստեղծվում է երկարատև ժամանակի համար և սահմանադրական հաճախակի փոփոխությունները արդարացված չեն: Խոսքը գնում է միայն բացառիկ դեպքերի մասին, երբ սահմանադրական փոփոխություններն անհրաժեշտություն են ու անխուսափելի և հասարակական հարաբերությունների շարժուն ընթացքը նոր իրավահարաբերությունների սահմանման անհրաժեշտություն է առաջացնում:

Խորհրդային Միության օրոք կոմունիստական կուսակցության ղեկավար դեր ունենալու հանգամանքը թույլ չտվեց լիարժեք կյանքի կոչել ինչպես ամբողջ Խորհրդային միության, այնպես էլ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Երկիրը առաջնորդվում էր կոմունիստական գաղափարախոսության շրջանակներում արձակվող կանոններով: ՀԽՍՀ սահմանադրության իրավակիրառման բացակայության պայմաններում իրավագիտությունը հնարավորություն չունեցավ իրավական գնահատական տալու ինչպես սահմանադրության դրույթներին, այնպես էլ նրանով սահմանված խորհրդային կառավարման համակարգին: Չնայած՝ կոմունիստական վարչակազմի անկումից հետո՝ Հայաստանի երրորդ հանրապետության առաջին տարիներին խորհրդային սահմանադրությունը սկսեց գործել ու իրավակիրառվել և պետք է անկեղծորեն ասել, որ այն իրականում պարունակում էր մարդու իրավունքներին առնչվող արդարացի սահմանումներ և կառավարման հետաքրքրաշարժ համակարգ: Սակայն ՀԽՍՀ սահմանադրությունը ազգային չէր և այդ պատճառով այն լիովին փոխարինվեց նոր սահմանադրությամբ: Նոր սահմանադրությամբ Հայաստանի երրորդ հանրապետությունում իրականացվեցին արմատական իրավական բարեփոխումներ: Հանրաքվեի միջոցով ընդունվեց սահմանադրություն և 1995 թվականի հուլիսի 5-ից Հայաստանում գործում է նոր սահմանադրություն: Այն անցումային ժամանակաշրջանի ծնունդ էր և, գուցե, իր ժամանակի համար արդարացված: Սահմանադրության գործողությամբ հանրապետությունը դառնում է կի-

սանախագահական կառավարման համակարգով պետություն: Հետագոտելով 1995 թվականին ընդունված Սահմանադրությունը և նրանով ամրագրված կիսանախագահական կամ խառը կառավարման համակարգը, ինչպես նաև գնահատելով նրա իրավակիրառումը՝ արդարացիորեն պետք է ասենք, որ խառը կառավարման համակարգի նժարը Հայաստանում ավելի շուտ միտված էր դեպի նախագահական ինստիտուտը: Սակայն պետք է ընդունել, որ Հայաստանի երրորդ հանրապետության անցումային շրջանում հանրապետության օպերատիվ կառավարման անհրաժեշտության առումով լուրջ դերակատություն ունեցավ Նախագահի ինստիտուտը: Բնականաբար վերն ասվածով ամենևին էլ չենք ուզում արդարացնել այդ ժամանակվա Նախագահի ինստիտուտի գերիխառություններով օժտելու փաստը և իշխանության այլ թևերի դերի բացակայությունը կառավարման համակարգում:

Արդեն խոսել ենք այն մասին, որ Հայաստանը 1990 թվականին թևակոխեց նոր ժամանակաշրջան: Հայաստանում, այդ թվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրականացվեցին Հայաստանի Խորհրդարանի (Գերագույն խորհրդի) պատգամավորների ընտրություններ, որով և ազատական գաղափարախոսական նոր համակարգի հիմքը դրվեց: Կոմունիստական գաղափարախոսությունը Սովետական Միության ժամանակ, ըստ էության, վերածվել էր երկրի «Կառավարիչ կազմակերպության»: Կոմունիստական կուսակցության կենտրոնական վարչակազմում էր որոշվում Հանրապետության կառավարման ուղիությունները, և կուսակցության տարածքային մարմինները ռեալիզացնում, ղեկավարում էին դրանց իրականացումը: Խորհրդային Միության կոմունիստական վարչակազմի ղեկավարության ներքո Խորհրդային Միության հանրապետությունների կոմունիստական վարչախմբերը փաստացի կառավարում էին տվյալ հանրապետությունները՝ ունենալով իրական իշխանություն և՛ գործադիր, և՛ օրենսդիր, և՛ դատական իշխանության նկատմամբ: Եթե խոսենք առավել ճշգրիտ, հանրապետության փաստացի ղեկավարը հանդիսանում էր կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարը և նրան օժանդակող կոմունիստական վարչակազմի այլ քարտուղարներ:

Կոմունիստական կուսակցության ապաիշխանացումից հետո իշխանությունը իրենց վրա վերցրին հանրապետության սահմանադրությամբ

նախատեսված մարմինները, այն է՝ խորհուրդները Գերագույն խորհրդի գլխավորությամբ: Փաստորեն, հանրապետությունը միակենտրոն կառավարման համակարգից կտրուկ անցում կատարեց կոլեգիալ կամ պառլամենտական կառավարման համակարգի: Գործող համակարգի կտրուկ փոփոխությունը վակուում առաջացրեց կառավարման համակարգում: Եվ պատահական չէր, որ 1990-1991 թվականների երկրի Գերագույն խորհրդի նախագահը պարբերաբար հանդես էր գալիս իրեն լրացուցիչ լիազորություններով օժտելու առաջարկությամբ: Վերջինս էլ ակտիվ մասնակցություն ունեցավ երկրում Նախագահի ինստիտուտի ներդրման հարցում: Նախագահի ինստիտուտի ներդրման գաղափարը, թերևս, տվյալ ժամանակաշրջանում ամենաարդարացված մոտեցումներից ենք համարում: Նոր անկախացող երկրում, որտեղ նոր էր սկսել ձևավորվել բազմակուսակցական քաղաքական համակարգը, որտեղ նոր էր սկսել ձևավորվել ազատ տնտեսավարման մեխանիզմները և իրականացվում էր պետական սեփականության ձևերից մասնավոր կամ խմբակային սեփականության ձևերի անցում, առավել քան կարևորվում էր օպերատիվ կառավարման մեխանիզմների ներդրումը: Չարգացող հարաբերությունների, այդ թվում՝ տնտեսական, հասարակական իրավական բարեփոխումների գործընթացի արագ կամ օպերատիվ կառավարման գործիքի ներդրման անհրաժեշտություն էր առաջացել: Օպերատիվ կառավարումը առավել քան կարևորվում էր հանրապետության արտաքին սպառնալիքի, այն է՝ պատերազմի վտանգի պայմաններում:

Հետագոտելով միակենտրոն (նախագահական կամ կիսանախագահական) կառավարման համակարգերը և նրա ինստիտուցիոնալ զարգացումները աշխարհում՝ գալիս ենք այն եզրահանգման, որ այն բավականին կատարելագործվել է և՛ լիազորությունների, և՛ իշխանության կազմակերպման առումով: Այդ ինստիտուտներն ունեն բավականին առանձնահատկություններ, որոնց անդրադառնալը այժմ մեր խնդիրը չէ: Սակայն, երբ խոսքը գնում է կառավարման համակարգերին, առավել քան կարևոր է օրենսդրորեն կամ երկրի հիմնական օրենքով հնարավորինս մանրամասն և սպառիչ սահմանել և՛ Նախագահի և՛ պառլամենտի լիազորությունները, նշված երկու ինստիտուտների իրավասությունների սահմանազատումը իրավակիրառման ընթացքում ապահովելու համար:

Հայաստանում Նախագահի ինստիտուտը

ներդրվել է 1991 թվականին: Տվյալ ժամանակաշրջանում երկրի սահմանադրությունը, որը ժառանգվել էր Խորհրդային Հայաստանից, նախագահի ինստիտուտ չէր նախատեսում: Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց «ՀՀ Նախագահի մասին» և «ՀՀ Նախագահի ընտրությունների մասին» օրենքներ, որով և հիմք դրվեց Հայաստանում նախագահի ինստիտուտին՝ կիսանախագահական կամ խառը կառավարման ձևով: Հետագա պետական իրավական զարգացումները հանգեցրին Նախագահի ինստիտուտի ամրապնդմանը և վերջապես 1995 թվականից հանրապետությունում գործող Սահմանադրությամբ պետական կառավարման համակարգի հստակեցմանը: Ինչ վերաբերում է Հայաստանի Նախագահի ինստիտուտին սահմանադրական բարեփոխումներից հետո, պետք է ընդգծել, որ այն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային փորձին և խառը կառավարման համակարգերի առանձնահատկություններին: Սահմանադրությունը մշակելիս հաշվի է առնվել նաև միջազգային սահմանադրագիտությունը և մեր ազգային յուրահատկությունները: Իհարկե, վերջինիս պարագայում ավելի քան աղքատիկ էլեմենտներ են ներդրվել: Հուսով ենք՝ հետագա սահմանադրական զարգացումները իրենց մեջ կներառեն նաև մեր ազգային խառնվածքին և աշխարհագրական դիրքին բնորոշ սահմանումներ կամ, առավել ճիշտ կլինի ասել, հայկական մոտեցումներ:

Իհարկե, հավակնություն չունեն ասելու, որ 1995 թվականին ընդունված սահմանադրությունը կատարյալ էր և ամբողջությամբ է արտացոլել իշխանության մարմինների տարանջատումը և հավասարակշռումը, ինչպես նաև Նախագահի դերը կառավարման համակարգերում: Միայն եմ համարում գնահատականներ տալ Սահմանադրությանը այն ժամանակ, երբ նրա ոչ բոլոր դրույթներն են կիրառվում կամ կիրառվում են թերի: Այսինքն՝ մեր Սահմանադրությունը լիարժեք փորձության դեռևս չի ենթարկվել:

Հայաստանի Սահմանադրության ընդունումից տասը տարի հետո իրականացվեցին սահմանադրական բարեփոխումներ: Այս դեպքում փոփոխություններն իրականում դրական էին: Ինչպես արդեն վերը խոսվեց, 1995 թվականին Սահմանադրությունը ընդունվեց այնպիսի ժամանակահատվածում, երբ Հայաստանը գտնվում էր անցումային սկզբնական շրջանում, տնտեսության խորը անկման և դեռևս պատերազմական սպառնալիքի

պայմաններում: Բնականաբար տասը տարիների ընթացքում հանրապետությունում բավականին տեղաշարժեր կատարվեցին, տնտեսությունը որոշակի առաջընթաց ունեցավ, և հասարակական այլ ոլորտներում նույնպես կատարվեցին որոշակի զարգացումներ: Բացի դրանից՝ այդ ընթացքում Հայաստանը անդամակցեց բազմաթիվ միջազգային կառույցների, այդ թվում՝ Եվրոխորհրդին և ստանձնեց բազմաթիվ պարտավորություններ: Կարելի է թվարկել մաս ալ գործոններ, որոնց արդյունքում հանրապետությունում սկսվեց սահմանադրությունը բարեփոխելու գործընթաց: Այսինքն, արդեն առաջացել էր սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն: Եվ ոչ միայն հիմա, այլև տարիների, տասնամյակների ընթացքում պետական, հասարակական, տնտեսական հարաբերությունների զարգացմանը համընթաց՝ Հայաստանի Սահմանադրության մեջ կկատարվեն փոփոխություններ: Սկզբնական՝ անցումային շրջանում սահմանադրական փոփոխությունները կլինեն ավելի հաճախ, իսկ հետագայում՝ պետական իշխանության մարմինների և հասարակական, քաղաքական ինստիտուտների զարգացման ու կայունացման հետ միասին առավել բացառիկ բնույթ կստանան:

Ինչպիսի սահմանադրություն, սահմանադրական փոփոխություններ և ընդհանրապես ազգային կառուցվածքներ են անհրաժեշտ Հայաստանին, հաշվի առնելով մեր ազգային նկարագիրը: Միանշանակ ասել, թե որ տարբերակն է առավել ճիշտը կամ արդյունավետը Հայաստանի համար, դժվար է: Եվ՝ նախագահական, և՛ կիսանախագահական, և՛ պառլամենտական և նույնիսկ միապետական կառավարման ձևերը կարող են լինել ժողովրդավարական, ազատ, իրավական, եթե գործում են սահմանադրությունը, օրենքները, պաշտպանվում են մարդու իրավունքները և ազատությունները, գործում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, ինչպես նաև սահմանված իրավանորմերը դեկլարատիվ բնույթ չեն կրում: Ընդ որում, մարդու իրավունքների պաշտպանության առաքելությունը պետք է տարածվի անխտիր բոլոր իշխանական մարմիններում, այլ ոչ թե վերաբերվի միայն առանձին իրավապահ մարմինների (մարդու իրավունքների պաշտպան, ոստիկանություն, դատարան և այլն)³:

Խորհրդային Հայաստանի Սահմանադրությունը, չնայած նրան, որ ազգային չէր, ուներ խորհրդարանական կառավարման յուրօրինակ ձև:

Եվ չի կարելի համաձայնվել այն մտքի հետ, որ այդ Սահմանադրությունը լավը չէր և կառավարման սահմանված համակարգը արդյունավետ լինել չէր կարող, քանի որ իրականում այդ սահմանադրության դրույթները չեն գործել և պրակտիկորեն չեն կիրառվել: Այսինքն՝ գնահատման առարկա գոյություն չունի: Այսօրվա գործող սահմանադրությանը նույնպես կտրուկ գնահատականներ տալը ընդունելի չէ, և այն կարծիքները, թե Հայաստանի կառավարման համակարգում անկատարությունը սահմանադրության դրույթներից է կամ կառավարման ձևի ընտրությունից, կարծում ենք տեղին չէ: Գտնում ենք, որ դա սահմանադրական դրույթների ոչ լիարժեք գործելու հանգամանքից է կախված: Պատմության մեջ կան այնպիսի օրինակներ, երբ սահմանադրության մեջ ամրագրված են մարդու իրավունքների և պետական իշխանության իրականացման մարդասիրական և ժողովրդավարական սկզբունքներ, որոնք իրականում չեն գործել: Շատ երկրներում նույնիսկ սահմանադրական կարգը բռնափոխվել է, և հաստատվել բռնապետություն: Այս առումով անհրաժեշտ է հարցի ծանրությունը տանել ոչ միայն կառավարման ձևերի կտրուկ փոփոխությունների, այլ սահմանադրության գործողության երաշխիքների ապահովման ուղղությամբ, որի կրողը պետք է լինի ժողովուրդը՝ ունենալով պետության կառավարմանը մասնակցելու առավել հստակ մեխանիզմներ և իրավունքներ:

Այսպիսով, սահմանադրական զարգացումների գործընթացում առաջին հերթին պետք է փաստել սահմանադրության ընդունման կարևորությունը, որի նպատակն է.

- հիմնական իրավանորմերը համակարգել մեկ միասնական կանոնակարգի մեջ,
- սահմանել մարդու գերակա և բնական իրավունքների առաջնայնությունը,
- սահմանել հասարակական կեցության կանոնները,
- կառավարման համակարգերի կանոնակարգումը, այդ թվում իշխանության մարմինների անկախության չափերի սահմանումը, որը կհանգեցնի իշխանության ճյուղերի փոխադարձ հակակշիռների համակարգի և հավասարակշիռ գործունեությունը կբացառի իշխանության միանձնյա զավթումը իշխանության որևէ այլ ճյուղի կողմից,
- արդարադատության հիմնական կանոնների սահմանումը, այդ թվում դատական մարմինների անկախ կարգավիճակի հաստատման միջոցով:

Երկրորդ՝ նույնպես կարևոր հանգամանքը այն է, որ անհրաժեշտ է (վերը խոսված պատճառներից ելնելով) ժամանակ առ ժամանակ իրականացնել սահմանադրական փոփոխություններ: Սահմանադրությունների ընդունման կամ դրանցում փոփոխություններ կատարելու հիմնական խնդիրը պետք է լինի իրավունքի գերակայության երաշխավորումը: Այն դեպքերում, երբ սահմանադրության բարեփոխումների անվան տակ որոշակի քաղաքական խնդիրներ են լուծվում, առանց հաշվառելու իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքը, դրանք չեն կարող լինել բարեփոխումներ, ավելին՝ կհակասեն իրավական ու ժողովրդավարության արժեքներին և սկզբունքներին: Անթույլատրելի է սահմանադրական ցանկացած փոփոխություն, որը կբուլացնի իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու իրավունքների պաշտպանությունը կամ այդ իրավունքների ու ազատությունների իրացման երաշխիքները:

Ինչ վերաբերում է Հայաստանի սահմա-

նադրական հետագա փոփոխություններին, գտնում ենք՝ դրանք պետք է առաջին հերթին իրականացվեն հասարակական պահանջի հաշվառմամբ, ինչպես նաև գիտական հիմնավորված հետազոտական աշխատանքների հիման վրա: Հետագայում փորձելու ենք հիմնավորել Հայաստանի համար նախընտրելի կառավարման համակարգի և դրա հետ կապված սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը: Գտնում ենք, որ այն պետք է լինի պառլամենտական կառավարման մոդելով, մեր պետության և ազգային առանձնահատկությունները ներդնելու պայմանով: Իհարկե, գտնում ենք, որ կառավարման համակարգի փոփոխությունները պետք է լինեն աստիճանաբար, ոչ կտրուկ և այնպիսի պայմաններում, երբ առկա են բարեփոխումներ իրականացնելու վերը թվարկված պայմանները, իրական ժողովրդավարական գործընթացներ ու հասարակական պահանջ:

¹ Տե՛ս Додонов Вячеслав Николаевич. «Конституционные реформы в государствах, возникших на территории бывшего СССР». Дис. ... канд. юрид. наук, Москва, 1997.

² Տե՛ս Շահամիր Շահամիրյան, «Ռոնգալթ փառաց», 1773–թարգմանությամբ ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոնի, Երևան, 2002:

³ Տե՛ս Нерсесянц В. С. Общая теория права и государства, Москва, 1999.

РЕЗЮМЕ

Правовые реформы и проблемы Армении

В переходный период третьей армянской республики проводятся коренные правовые реформы. Учитывая необходимость в быстром и систематизированном проведении реформ, а также общественный спрос, более чем актуальным становится изучение процесса правовых реформ, которое имеет своей целью формирование и предложение концептуально-правовых подходов, наряду с развитием общественных, экономических, политических процессов для обеспечения непрерывного развития государства.

SUMMARY

Judicial reforms and issues of Republic of Armenia Brief description of the article (annotation)

During the transition period of the third Republic of Armenia radical juridical reforms were made. Taking into consideration the necessity of accelerated and structural reforms, as well as the needs of society, the study of the judicial reforms process is vastly actual aiming at the formulation and proposal of conceptual juridical approaches parallel to the developments of public, political, economical process providing uninterrupted development of the State.

ԱԳՆԵՍԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի, Եվրոպական և
միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՆ**

Կիլիկիայի հայկական պետությունը, ձևավորվելով ժամանակաշրջանի միջազգային կյանքի կենտրոններից մեկը հանդիսացող տարածաշրջանում, ակտիվորեն մասնակցում էր միջազգային գործընթացներին: Առանձնահատուկ աշխարհագրական դիրքի շնորհիվ, գտնվելով երեք աշխարհամասերի՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի խաչմերուկում, Կիլիկիայի հայկական թագավորությունը նշանակալի դերակատարում ուներ Արևելքի և Արևմուտքի երկրների միջև ծավալված ռազմաքաղաքական, առևտրա-տնտեսական և մշակութային փոխհարաբերություններում: Միաժամանակ, կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն ունենալով Առաջավոր Ասիայում, Կիլիկիան հայտնվեց միջազգային քաղաքական իրադարձությունների կենտրոնում:

11-րդ դարից սկսած՝ Բյուզանդիան, Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Արևմտյան Եվրոպայից Արևելք ներթափանցած խաչակիրները պայքարում էին Մերձավոր Արևելքում հաստատվելու համար: Ուստի, Կիլիկիայի հայկական պետության կազմավորումը տեղի էր ունենում լարված միջազգային քաղաքական մթնոլորտում, հակադրվող շահերի բախման պայմաններում:

Արդեն 13-րդ դարի 50-ականներին տարածաշրջանում ուժերի հարաբերակցության փոփոխության հետևանքով Կիլիկիայի հայկական թագավորությունը կանգնեց նոր միջազգային քաղաքական իրավիճակի առջև: Մերձավոր Արևելքում ասպարեզ էին եկել երկու հզոր տերություններ՝ մոնղոլական իլխանությունը և Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը: Մոնղոլները, նպատակ ունենալով գրավել Սիրիայի և Պաղեստինի ռազմական և առևտրական խոշոր նշանակության նավահանգիստները, ընդհարվեցին Եգիպտոսի մամլուքյան սուլթանության հետ: Կիլիկյան պետությունը

մամլուքների դեմ մոնղոլների պայքարում դարձավ իլխանության վստահելի հենարանը, ինչը սկիզբ դրեց նաև հայ-եգիպտական երկարատև հակամարտությանը: Միաժամանակ, Եգիպտոսի կողմից 1268թ. Անտիոքի դքսության կործանումից հետո Եվրոպայի համար ավելի մեծացավ Կիլիկիայի ռազմավարական և տնտեսական նշանակությունը: Պապական դիվանագիտությունը նոր խաչակրաց արշավանքների ծրագրեր էր մշակում՝ այդ գործում մատնանշելով Կիլիկյան պետության կարևորությունը: Կիլիկիայի թագավորներն իրենց հերթին, հատկապես Հեթում II-ի կառավարման շրջանից սկսած, եռանդուն ջանքեր էին գործադրում Արևմուտքի հետ ռազմաքաղաքական սերտ համագործակցություն հաստատելու համար:

Հատկանշական է, որ, ի սկզբանե, Կիլիկիայի հայկական թագավորությունն առնչվում էր ոչ միայն քաղաքական շահերի տեսանկյունից հակադրվող երկրների, այլ նաև ոչ միատիպ միջազգային-իրավական համակարգի պատկանող պետությունների հետ:

Ինչպես հին աշխարհում, միջնադարում ևս չկար միջազգային հարաբերությունների կարգավորման մեկ ընդհանուր համակարգ: Քննվող ժամանակահատվածում գոյություն ունեին միջազգային կյանքի տարբեր կենտրոններ՝ միջպետական հարաբերությունների և միջազգային շփումների կարգավորման ոչ միատեսակ մոտեցմամբ: Արևմտյան և Արևելյան Եվրոպայում միջազգային իրավական նորմերի զարգացումը տեղի էր ունենում հռոմեական իրավունքի ազդեցությամբ: Միջնադարյան Եվրոպայում միջազգային իրավական նորմերի վրա մեծ էր նաև կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը, որը դրսևորվում էր կանոնական իրավունքի միջոցով, մինչդեռ արաբական աշխարհում միջազգային իրավական պրակտիկան զարգանում

էր իսլամի զգալի ազդեցությամբ: Շարիաթն այն կարևորագույն աղբյուրն էր, որից բխում էին ինչպես արաբական երկրների միջև, այնպես էլ արաբական պետությունների՝ ոչ արաբական աշխարհի հետ հարաբերությունների կարգավորման հիմնական սկզբունքները: Այդուհանդերձ, արդեն միջնադարում միջպետական հարաբերությունների կարգավորման որոշակի փորձ կուտակվել էր, որն իր արտացոլումն էր գտել ժամանակաշրջանի միջազգային իրավական ինստիտուտներում: Այստեղ պետք է առանձնացնել պայմանագրային իրավունքը, որը հենվում էր միջազգային սովորության ճանաչման վրա: Պրակտիկան մշակել էր պայմանագրերի որոշակի տեսակներ՝ հաշտության, դաշնակցային, բարեկամության, փոխօգնության, առևտրի, սահմանների, արբիտրաժի, չեզոքության և այլն:

Կիլիկիայի հայկական պետության պայմանագրային պրակտիկան ևս ձևավորվեց միջնադարյան սովորության ճանաչման վրա և անմիջականորեն պայմանավորվեց ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների առանձնահատկություններով:

Կիլիկյան պետության պայմանագրային պրակտիկան սկսվում է դեռ Կիլիկիայի հայկական իշխանության գոյության ժամանակաշրջանից: Հայտնի են Ռուբինյան իշխանների՝ մասնավորապես Անտիոքի դքսության և Բյուզանդական կայսրության հետ կնքած հաշտության և դաշնակցային պայմանագրերը:

Կիլիկիայի հայկական թագավորության՝ մեզ հայտնի միջպետական պայմանագրերը ներկայանում են որպես երկկողմ քաղաքական պայմանագրեր, որոնք կնքվել են Իկոնիայի սելջուկյան սուլթանության, Մոնղոլական կայսրության, Եգիպտոսի մամլուքյան սուլթանության հետ:

Կիլիկյան թագավորության միջպետական պայմանագրերի կնքումը սկսվում էր կողմերից մեկի՝ պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ, որին հաջորդում էր բանակցային գործընթացը: Պայմանագրերի տեքստերը բանակցվում էին թագավորի կողմից լիազորված ներկայացուցիչների միջոցով, երբեմն նաև անձամբ թագավորի կողմից (օրինակ՝ 1254թ. հայ-մոնղոլական դաշնակցային պայմանագիրը կնքելիս բանակացությունները տարվել են անձամբ Հեթում I-ի կողմից): Բանակցային գործընթացի արդյունքում կազմվում էր պայմանագրի տեքստը, իսկ նախապես համաձայնեցված տեքստի վերջնական հաստատումը կա-

տարվում էր թագավորի կողմից:

Միջնադարյան միջպետական պայմանագրերի ուժի մեջ մտնելն առհասարակ պահանջում էր մասնակիցների կողմից պայմանագրի վավերացում: Կիլիկյան պետությունում միջպետական պայմանագրերի վավերացումը պարտադիր էր համարվում: Պայմանագրերը վավերացնում էր թագավորը: Վավերացումը ենթադրում էր միապետի պաշտոնական հավանությունը պայմանագրին, որից հետո միայն պայմանագիրը պարտադիր էր համարվում: Պայմանագրի վավերացումը կատարվում էր թագավորի կողմից հանդիսավոր կերպով տրված կրոնական երդման միջոցով, որին ներկա էին գտնվում նաև պայմանագրի մյուս կողմի պատվիրակները:

Անդրադառնալով Կիլիկիայի հայկական պետության միջպետական պայմանագրերի կառուցվածքին՝ պետք է նշել, որ այդ կապակցությամբ մեզ որոշակի պատկերացում է տալիս 1285թ. հայ-եգիպտական հաշտության պայմանագիրը: Պայմանագիրը բերված է արաբ պատմագիր Թադի-էդ-Դին Ահմեդ Մաքրիզիի՝ Եգիպտոսի մամլուք սուլթանների պատմությանը նվիրված աշխատության մեջ և, ամենայն հավանականությամբ, գրված է բնօրինակից: Այն Կիլիկիայի հայկական թագավորության՝ այլ երկրների հետ կնքած պայմանագրերից միակն է, որը մեզ է հասել ոչ միայն բովանդակային, այլ նաև կառուցվածքային պարունակությամբ: Պայմանագիրը կազմված է ժամանակաշրջանի պայմանագրերի տեքստային կառուցվածքին համապատասխան, որոնք հիմնականում եռամաս էին՝ կազմված նախաբանից, հիմնական մասից և եզրափակիչ մասից:

Պայմանագրի նախաբանը բավականին ընդարձակ է, որտեղ մեծ տեղ է հատկացվում կրոնական երդմնագրին: 1285թ. հայ-եգիպտական պայմանագրի նախաբանում կարդում ենք. «Ես Լևոն, որդի Հեթումի, որդի Կոստանդինի. Աստուծով, Աստուծով, Աստուծով», «Վասն Աստուծո...» (3 անգամ), «հանուն Աստծո» (3 անգամ) «ճշմարիտ Մեսիայով» (3 անգամ), «ճշմարիտ խաչով» (3 անգամ), «ճշմարիտ Ավետարանով» (3 անգամ), «ճշմարիտ Հորով, Որդով և Ս. Հոգով», «ճշմարիտ երեք անձերով և մեկ աստվածությամբ», «ճշմարիտ 4 ավետարաններով», «ճշմարիտ 12 աշակերտներով և 318 եկեղեցու պաշտպան եպիսկոպոսներով», Սրբուհի Մարիամով, ս. Հովհաննես Սկրտչով, ս. Թովմասով, ս. Մարկոսով, ճշմարիտ մեծ պահքերով, «ճշմարիտ քրիստոնեությունով, որ իմ կրոնն ու

հավատն է», այն մկրտությունով, որ «ընդունել են քահանաներից և հայրերից», «այն բոլոր ճշմարիտ հայրերով, որ մերձ են առ Աստված: Այս թվակա- նից, այս ժամից սկսած կխոստանամ դնել մի ան- կեղծ եռանդ, մի ուղիղ նպատակ՝ ի հնազանդու- քյուն և ի կատարումն իմ պարտքերի առ մեր տերն Սուրբանն Մելիք-էլ-Մանսուր...»: Կուխտեմ պահ- պանել դաշնագրիս բոլոր պայմանները, որոնք պի- տի մանրամասնվեն այս երդմանս տակ»¹:

Նախաբանում մանրամասնվում է նաև պայմանագրի ժամկետը. «Այս զինադադարը պետք է տևի տասը տարի ամբողջ և հաջորդական անընդհատ, և տասն ամիս, և տասն օր և տասը ժամ»²:

Պայմանագրի նախաբանը պարունակում է նաև պատժամիջոցներ պայմանագիրը խախտելու համար. «Պիտի հարգեմ այս զինադադարը մինչև ցվախճան պայմանաժամին և նրա պայմանները պիտի կատարեմ մի առ մի, կխոստանամ նրանց հետևել հավատարմաբար, ինչպես և բոլոր պարու- նակությանը. երբեք նրա դեմ չպիտի գործեմ ոչ գոր- ծով, ոչ նշանով, ոչ ակնարկությամբ. չպիտի փնտ- րեմ ոչ մեկ առիթ այն բեկանելու կամ նրա որևէ մա- սը ջնջելու: Այս դաշնագրի վերաբերյալ, նրա բաղ- կացուցիչ կետերի և նրա սահմանած պայմաննե- րից որևէ մեկի մասին ուրիշի հետ չպիտի խորհր- դակցեմ: Եթե այս պայմանը ամբողջովին կամ մա- սամբ դրժեմ, եթե նրա մասին մեկի հետ խորհրդակ- ցեմ և եթե վերապահումներ անեմ նրա ամբողջու- քյան կամ նրա այս կամ այն նախատեսումների մասին, ինչ որ ունեմ՝ շնչավոր էակ կամ նյութական առարկա, պետք է բաշխվի իբրև ողորմություն քրիստոնյաների մեջ գտնվող աղքատներին ու չքա- վորներին, և ես հանձ կառնեմ երեսուն անգամ ուխ- տագնացություն կատարելու դեպի Երուսաղեմ հե- տիոտն, զվաբաց և բոկոտն: Հանձն կառնեմ պահք պահել ամբողջ կենացս մեջ, եթե չկատարեմ այս զինադադարի պայմանները կամ նրանցից մի քանիսը և կամ եթե կատարեմ մի գործ, որ այս պայմանի և նրա հողվածներից որևէ մեկի ճշտիվ կատարման հակառակ լինի: Եվ այս բանը պիտի շարունակվի զինադադարի սկզբից մինչև այն պայ- մանաժամը, որ այս երդմանագրի մեջ որոշված է»³:

Սուրբան Քալաունը ևս պարտավորվել էր հարգել պայմանագիրը, սակայն մեզ չի հասել սուր- քանի երդմանագրի բովանդակությունը: Նշենք մի- այն, որ 1283թ. Եգիպտոսի և Ակրայի միջև կնքված պայմանագրով սուրբան Քալաունը հանձն էր առել 30 ուխտագնացություն կատարել դեպի Մեքքա

պայմանագիրը խախտելու դեպքում⁴:

Պայմանագրի հիմնական մասը գրված է մեկ ընդհանուր տեքստով: Տարբեր պարտավորու- քյուններ հետևում են մեկը մյուսին՝ առանց դրանք հողվածների բաժանելու:

Եզրափակիչ մասն իրենից ներկայացնում է պայմանագրին հավատարիմ մնալու երդմագիր: Այն է՝ «Հանուն Աստծո և ի սեր հավատիս, կրոնիս և դավանությանս, խոստանում եմ հավատարմո- րեն հարգել այս զինադադարի պայմանները: Եվ այս երդումն՝ իմ երդումն է, Լևոնի, Հեթումի որդու: Եվ այս մասին իմ դիտավորությունները նույնն են, ինչ որ Սուրբանինը, նրա որդիներինը, ինչպես և նրանց անունով իմ երդումը ընդունող անձի դիտա- վորությունները: Չունեմ երբեք ուրիշ նպատակ, ու- րիշ դիտավորություն, քան այն, ինչ իրենք ունեն: Աստված թող վկա լինի այս ամենին: Ամենա- բարձրյալն երաշխավոր է խոսքերիս ճշմարտու- քյան: Թող Մեսիան ևս լինի վկա՝ ինձ դեմ բողոքե- լու պատրաստ»⁵:

Փաստորեն երդումը պայմանագրերի կա- տարման կարևոր երաշխիքային միջոց էր, սակայն տրված խոսքին հավատարիմ մնալը հիմնվում էր միայն բարոյա-կրոնական նորմերի վրա և հաճախ էր խախտվում: Գոյություն ունեին պայմանագրերի ի կատար ածման նաև այլ երաշխիքներ, ինչպես պատանդների փոխանակումը, արժեքավոր իրերի և տարածքների գրավադրումը, երրորդ պետու- քյունների կողմից երաշխավորությունը, ամուսնա- կան կապերի հաստատումը պայմանագիրը կնքող կողմերի իշխող վերնախավի անդամների միջև և այլն: Այսպես՝ 1194թ. Լևոն II-ի և Անտիոքի դուքս Բոհեմունդ III-ի միջև կնքված պայմանագիրը ամրապնդվեց Բոհեմունդի որդի Ռայմոնդի և Լևոն II-ի եղբոր աղջիկ Ալիսի ամուսնությամբ:

Պայմանագրերի երաշխավորման գործում նշանակալի դերակատարում ունեւ Հռոմի պապը: Կանոնական իրավունքը հենվում էր եկեղեցական այն դրույթի վրա, որ տրված խոստումից հրաժա- րումը համարժեք է ստի և, հետևաբար, մեղք է: Եկե- դեցու կարգապահական գործառույթներից էր հետևողական լինելը տրված խոստումների, այդ թվում՝ պայմանագրային պարտավորությունների կատարմանը⁶: Պապերը քննում էին պայմանագրե- րի խախտման բողոքները և հավակնում այսպես կոչված դիսպենսացիայի իրավունքին՝ պայմանա- գիրը կնքելիս տրված երդումից ազատելու իրա- վունքին⁷:

Հետաքրքրական է, որ 1338թ. Հռոմի պապ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Բենեդիկտոս XII-ը Լևոն V-ին ուղղված նամակով ազատեց նրան 1337թ. Եզիպտոսի սուլթան Մելիք-Նասիրի հետ կնքած պայմանագրի համար տրված երդումից՝ պատճառաբանելով, որ այն տրվել է ոչ կամավոր կերպով⁸։ Այդպիսով, Կիլիկիայի համար պայմանագիրը չեղյալ համարվեց։ Բենեդիկտոս XII-ի միջամտությունը այս հարցին պայմանավորված էր այն հանգամանքով, որ Լևոն V-ը անձամբ ընդունում էր Հռոմի պապի բարձր հեղինակությունը, նրա կրոնական քաղաքականությունն ուղղված էր հայ և կաթոլիկ եկեղեցիների ունիային, մինչդեռ պայմանագրով կիլիկյան թագավորը պարտավորվել էր այլևս դիմումներ և պատվիրակություններ չուղարկել պապին։

Այդուհանդերձ Հռոմի պապի որոշումները տարածվում էին միայն կաթոլիկ աշխարհում և նրա ազդեցության ոլորտում գտնվող երկրներում, մինչդեռ պայմանագիրը կնքվել էր քրիստոնեություն և մահմեդականություն դավանող երկրների միջև։ Եզիպտոսի համար պայմանագիրը շարունակում էր ուժի մեջ մնալ, և, հետևաբար, վերջինիս կողմից Կիլիկիան դիտարկվում էր իբրև պայմանագիրը խախտող կողմ։

Վերոնշյալը, սակայն, Կիլիկյան պետության պայմանագրային պրակտիկայում մշտապես կիրառելի չէր։ Կիլիկիայի՝ այլ պետությունների հետ պայմանագրային հարաբերությունները կարգավորվում էին անմիջականորեն պայմանագիրը կնքած կողմերի միջև։ Եթե պայմանագիրն անգամ կնքվել էր հարկադրանքի ճանապարհով, ոչ իրավահավասար հիմքերով, այն չէր կարող չեղյալ հայտարարվել։ Արդեն կնքված պայմանագիրը պարտադիր էր կողմերի համար։ Այսպես՝ Լևոն II-ը 1194թ., գերեվարելով Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ին, նրա հետ կնքեց իր շահերից բխող համաձայնագիր, որով լուծվեցին Կիլիկիայի հայկական իշխանության և Անտիոքի դքսության միջև գոյություն ունեցող տարածքային խնդիրները հոգուտ Կիլիկիայի։

1268թ. Հեթում I-ը Եզիպտոսի սուլթան Բեյբարսի կողմից գերված թագաժառանգ Լևոնին ազատ արձակելու դիմաց պայմանագիր կնքեց սուլթանի հետ՝ վերջինիս առաջադրած պայմաններով։ Այս առթիվ արաբ պատմագիր Աբու-լ-Ֆիդայի «Ժամանակագրության» մեջ կարդում ենք. «...հաշտություն կայացավ ալ-Մալիք ալ-Չահիրի (սուլթան Բեյբարս) և Սսի տիրոջ՝ Հեթումի միջև այն հիման վրա, որ եթե Սսի տերը թաթարների մոտից բերի Սոնկուր ալ-Աշկարին, որոնք նրան գերի

էին վերցրել Հալեբի բերդից այն ժամանակ, երբ Հուլադուն տիրել էր այդ տեղին, և բացի այդ՝ հանձնի Բեհեսնին, Դարպասկը, Մարգբանը, Դաբանը, Շիհել Հադիդը, ապա սուլթանն էլ ազատ կարձակի նրա որդի Լևոնին։ Ապա Սսի տերը ներկայացավ Աբադային, թաթարներին և նրանից խնդրեց Սոնկուր ալ-Աշկարին։ Նա էլ հանձնեց նրան և Սոնկուր ալ-Աշկարը վերադարձավ ալ-Մալիք ալ-Չահիրի ծառայությանը և Դարպասկը, ինչպես և մյուս վայրերը, որոնք հիշեցինք, հանձնվեցին, բացի Բեհեսնից։ Ալ-Մալիք ալ-Չահիրն էլ ազատ արձակեց Սսի տեր Հեթումի որդուն՝ Լևոնին, ու վերադարձրեց իր հորը»⁹։

Ժամանակաշրջանի միջպետական պայմանագրային հարաբերությունների կարևոր առանձնահատկություններից էր այն, որ այդ հարաբերություններում վճռորոշ դերակատարում ունեցր քաղաքական շահի գործոնը։ Պայմանագրերի բարեխիղճ կատարման բարոյա-կրոնական նորմերը պարբերաբար անտեսվում էին, իսկ պայմանագրերի պահպանումը հաճախ անմիջականորեն պայմանավորված էր քաղաքական դրդապատճառով։ Սա տեսանելի է նաև Կիլիկյան հայկական պետության պայմանագրային պրակտիկայում։ Օրինակ՝ Կիլիկիայի հայկական թագավորության և Եզիպտոսի մամլուքյան սուլթանության միջև 1268թ., 1285թ., 1293թ., 1323թ., 1337թ. պայմանագրերը կնքվել են Կիլիկիայի դեմ եզիպտական արշավանքների արդյունքում՝ որպես հաշտության պայմանագրեր, հիմնականում Եզիպտոսի ռազմական գործողությունները կանխելու կամ դադարեցնելու նպատակով։ Քանի որ Կիլիկիան իր արտաքին քաղաքականությունը վարելիս Եզիպտոսը դիտարկում էր իբրև հակառակորդ պետություն, ուստի վերջինիս հետ կնքվող պայմանագրերը սովորաբար խախտվում էին մինչև դրանց ժամկետի ավարտը։

Հայտնի է նաև, որ քաղաքական նկատառումներով Հեթում I-ը խախտում է միջազգային սովորույթային նորմերից հյուրընկալության սովորույթը։ Հայ-մոնղոլական առաջին պայմանագրի 1243թ. (1244թ.) կնքման նպատակով Հեթում I-ը ընդունում է մոնղոլ զորավար Բաչու Նոյիմի նախապայմանը և նրան հանձնում Կիլիկիայում ապատանաձ Իկոնիայի սուլթանի ընտանիքի անդամներին։ Այն, որ Կիլիկյան պետությունն ընդունում և հետևում էր այս սովորույթին, վկայում է Հեթում I-ի արձագանքը մոնղոլ զորավարի պահանջին՝ «լավ էր իմ որդի Լևոնին խնդրեին, քան նրանց»¹⁰։ Միջ-

նադարյան հայ պատմիչների վկայությամբ Հեթումը իր կամքին հակառակ Կիլիկիայի դեմ մոնղոլական հարձակման սպառնալիքի տակ միայն համաձայնեց հանձնել սուլթանի հարազատներին¹¹: Միաժամանակ Հեթումյանները խախտում են նաև 1220թ. Իկոնիայի սելջուկյան սուլթանության հետ կնքած հաշտության պայմանագիրը՝ հրաժարվելով սուլթան Քեյ-Խոսրովին տրամադրել պայմանագրով նախատեսված զինվորական օժանդակ ուժեր մոնղոլների դեմ ռազմական գործողություններ իրականացնելու համար:

Փաստորեն Կիլիկիան պետությունների հետ հարաբերություններում առաջնորդվում էր ժամանակաշրջանի միջազգային սովորությանն հարմարեցնելով, սակայն այդ նորմերը պահպանվում էին այնքան ժամանակ, քանի դեռ չէին սպառնում պետության արմատական շահերին:

Պետությունները դեռ հնուց ելնում էին այն սկզբունքից, որ եթե կողմերից մեկը խախտում է պայմանագիրը, մյուս կողմը կարող է միակողմանիորեն հրաժարվել պայմանագրից¹²: Պայմանագրի խախտումը որակվում էր որպես թշնամական ակտ և կապված էր լուրջ հետևանքների հետ: Ինչպես տեսանք, 1285թ. հայ-եգիպտական պայմանագիրը պարունակում էր պատժամիջոցներ այն խախտելու համար: Իրականում կրոնական բովանդակությամբ պատժամիջոցներն առավելապես ձևական բնույթ էին կրում: Կիլիկյան պետության կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման դեպքում վերջինիս դեմ, որպես հիմնական պատժամիջոց, կիրառվում էր ռազմական ուժը: Այսպես, Կիլիկիայի հայկական թագավորության կողմից 1220թ. Իկոնիայի սելջուկյան սուլթանության հետ կնքած պայմանագիրը խախտելու և սուլթանի ընտանիքի անդամների նկատմամբ հյուրընկալության սովորույթը անտեսելու համար սելջուկները պատժիչ գործողությունների դիմեցին՝ ռազմական հարձակումներ իրականացնելով Կիլիկիայի դեմ: Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունն ամեն անգամ պատերազմ էր սկսում Կիլիկիայի հայկական թագավորության դեմ, երբ համարում էր, որ պայմանագրի խախտում է տեղի ունեցել: Արաբական աղբյուրները, հիմնավորելով եգիպտացիների կողմից վերսկսված արշավանքները (1275-1276թթ.), մեղադրում են Լևոն III-ին 1268թ. պայմանագրի կետերին չհետևելու, այն է՝ պահանջվող տուրքը չվճարելու, ամրոցները վերականգնելու, մամլուքների առևտրական քարավանների վրա կատարվող հարձակումների մեջ¹³:

Եգիպտոսի սուլթանության ռազմական գործողությունները կարող էին պայմանավորված լինել նաև Կիլիկիայի՝ ռազմական օգնություն ստանալու նպատակով Հռոմի պապի և եվրոպական պետությունների հետ տարվող բանակցություններով, նամանավանդ, որ Արևմուտքում Եգիպտոսի դեմ նոր խաչակրաց արշավանքների ծրագրեր էին մշակվում: Ամբողջությամբ չտիրապետելով 1268թ. պայմանագրի բովանդակությանը՝ դժվար է ենթադրել, թե ինչպիսի պարտավորություններ են կողմերը ստանձնել միմյանց նկատմամբ, և թե որքանով էր հիմնավորված Եգիպտոսի կողմից ռազմական ուժին դիմելը: Սակայն, արդեն 1285թ. պայմանագրով նախատեսվում էր. «Սուլթանի տերության, նրա զորքի և հպատակների մասին ամենևին որևէ բան չհայտնել իբրև օժանդակություն այն անձանց, որոնք միտք ունեն թշնամություն անելու թե՛ արշավանքով, թե՛ որևէ վնասաբեր եղանակով, չմասնակցել որևէ դավադրության, որը կարող է չար ու վատ հետևանք ունենալ, բարյացակամություն ցույց չտալ Սուլթանի թշնամիներից որևէ մեկին, նրան երբեք չօգնել, չնպաստել, նրա հետ որևէ հաղորդակցություն չունենալ՝ ոչ անուղղակի նշաններով, ոչ նամակով, ոչ դեսպանությամբ և կամ բերանացի պատգամով, այլ իր բանակցություններով ջանալով միայն իր անձն ու տերությունը ապահովության մեջ պահելու: Նա խոստանում է ամեն ճիգ թափել՝ Սուլթանի երկրները բոլոր չարիքներից ապահովելու, ձեռքակալելու բոլոր նրանց, ովքեր իր երկրից փախչելով՝ թշնամություն և ավերում պիտի գործեն այնտեղ»¹⁴:

Կիլիկիայի հայկական պետությունը քաղաքական պայմանագրեր էր կնքում ժամանակաշրջանի հզոր տերությունների հետ: Միաժամանակ պետության հզորության գործոնը մեծ նշանակություն ուներ պայմանագիրը խախտողին պատասխանատվության ենթարկելիս, ընդ որում, ռազմականապես ավելի ուժեղ պետության կողմից պայմանագրի խախտումը վերջինիս համար կարող էր հետևանքներ չառաջացնել: Այսպես՝ Կիլիկիայում գտնվող մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Փիլարդուի՝ 1307թ. Կիլիկիայի հայկական պետության դեմ իրականացրած հանցագործությունից հետո, այն է՝ Լևոն IV-ի, Հեթում թագավորահոր և հայ իշխանների սպանությունից հետո Կիլիկյան պետության կողմից պատժիչ գործողություններ չիրականացվեցին: Փաստացի տեղեկություններ չկան այս միջադեպից հետո Կիլիկիայի հայկական թագավորության կողմից 1254թ.

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հայ-մոնղոլական դաշնակցային պայմանագիրը կատարումը շարունակելու, մասնավորապես՝ Եգիպտոսի դեմ Իլխանության արշավանքներին մասնակցելու մասին:

¹ Տե՛ս Սուքիասյան Ա. Գ. Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 217:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Սուքիասյան Ա. Գ. էջ 217-218:

⁴ Տե՛ս Holt P.M. The Treaties of the early Mamluk sultans with the Frankish states, Bulletin of the School of Oriental and African studies, University of London, 1980, vol. XLIII, part 1, p. 69.

⁵ Տե՛ս Սուքիասյան Ա. Գ. էջ 225:

⁶ Տե՛ս Wilhelm G. Grewe, The Epochs of International Law, Berlin, 2000, p. 90.

⁷ Տե՛ս Левин Д.Б. История международного права, М., 1962. С. 22.

⁸ Տե՛ս Չամչյան Մ. Հայոց պատմություն, հատոր Գ, Երևան, 1984, էջ 337-338, Օրմանյան Մ., Ազգապատում, հատոր Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սյուն 2167:

⁹ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ.Թ Նալբանդյանը, Երևան, 1965թ, էջ 237:

¹⁰ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 285:

¹¹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, Ս.Ղազար, 1956 էջ 226-227:

¹² Տե՛ս Талалаев А. Н. Право международных договоров: Общие вопросы, М., 1980, С.19.

¹³ Տե՛ս Angus Donal Stewart, The Armenian Kingdom and the Mamluks: war and diplomacy during the reigns of Het'um II, Brill, 2001, p. 50.

¹⁴ Տե՛ս Սուքիասյան Ա. Գ. էջ 224:

РЕЗЮМЕ

*Практика заключения и исполнения межгосударственных договоров
Киликийского армянского царства*

Статья посвящена исследованию международно-правовых основ межгосударственных отношений Киликийского армянского царства. В данной статье рассматриваются некоторые особенности заключения и выполнения межгосударственных договоров Киликийского армянского государства. На конкретных примерах показано в каком порядке заключались договоры между Киликией и другими государствами и какие механизмы обеспечения договорных обязательств существовали.

SUMMARY

*The practice of conclusion and execution of international treaties
of the Armenian Kingdom of Cilicia*

The article deals with the international legal framework of interstate relations of the Armenian Kingdom of Cilicia. The article discusses some features of the conclusion and implementation of international treaties of the Armenian Kingdom of Cilicia. It reveals the procedure for the conclusion and execution of international treaties of Cilician Armenia and the mechanisms for ensuring treaty obligations.

ՔՐԻՍՏԻՆԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի, քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

ՏԱԹՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

**ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ՔՐԵԱԽՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻՑ ԴՈՒՐՍ**

Դատախազության արտաքրեական լիազորությունների խնդիրն այսօր բազմաթիվ քննարկումների, տարածայնությունների ու կարծիքների առարկա է: Արդյո՞ք անհրաժեշտ կամ նպատակահարմար է օժտել դատախազությանը նման լիազորություններով, թե՛ ոչ:

